№ 8 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1907

Hentchak : Organe Central DU PARTI HENTCHAKISTE

ՀՆՉԱԿ

Journal Arménien mensuel XX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՅԺԻ ԴԵՐԸ

Եթէ ցարի կառավարութեան ամբողջ պաշտօնէութիւնը, մեծից մինչև փոքրը, մի էականութեան (entité) վերածելու և յատկանշելու լինենք, ուրիշ աւելի յարմարագոյն եզր չկայ, եթէ ոչ անուանել այն Կատաղած Դազան: Բուական է մի թեթև ակնարկ լայնածաւալ Ռուսաստանի վրայ՝ համոզուելու համար, որ վրիպուրը բերանին այդ Դազանը ուղղակի փարատում, ծուատում, աւեր-կործանման է ենթարկում այն ամէնը՝ ինչոր Կենսականութիւն, Ընդդիմադիր, Գայքարող և Յեղափոխական Ոյժ է ներկայացնում: Կռուի այդ թափը ի՛սկ յայտնի ապացոյց է, որ արիւնռուշտ կառավարութիւնը շատ էլ ապահով չէ իր տարած կասկածելի յաղթութեան և վաղուան մասին: Եւ ո՞վ է ցարիզմի արիւնախանձ արարքների անմիջական զոհը, — ժողովուրդը. այն տարրը, որ իր ոսկրների բուրգերը դաշտերի վրայ թողնելով՝ ոսկիների կոյտեր է հոսեցրել դէպի այն Դանձարանը, ուրտեղից առատ վարձատրութիւններ են դուրս գալիս այն ձեռքերին, որոնք մի՛ակ նպատակ և հրաման ունեն խողխողել, զնդակոցիների կեր դարձնել նոյն այդ աշխատող՝ բայց չվայելող, ցարերին և նրա դոյութեան սիւները կազմող դասակարգերին յղփութեան մէջ լողացնել տուող, բայց ինքը աւուր հայի կարօտող՝ տարին-տասներկու ամիս տանջանքների բովերի մէջ իր կեանքը մաշող ժողովրդին. և ինչո՞ւ, — որովհետև նա գիտակցութեան է եկել և ուզում է ապրել, աշխատել իր և մի՛այն իր համար, և ոչ թէ իր շահագործողների, նրանց՝ որոնք ցար, կայսր, թագաւոր, իշխան, աղա, տէր . . . և սատուրնական այլ անուններ ունեն: Եւ ի՞նչ է ներկայացնում, այս բոպէիս, ամբողջ Ռուսաստանը — մի անհուն արտ, ուր ցարական մանգաղը արմատից խլել է աշխատում այն բոլորը՝ ինչոր իր դոյութեանը սպառնալու երևոյթն ունի: Այժմ բանտերը և աքսորավայրերը աւելի մեծ թուով բնակիչներ ունեն, քան «Սրբազան Ռուսիան»:

Իրերի այս դրութեան մէջ, իր տուած բոլոր խոստումները ամենանենգամիտ կերպով դրժելուց, մամուլի և հաւաքումների կարծեցեալ ազատութիւնը խոպառ ջնջելուց, աշխատաւոր դասակարգի ընտրական իրաւունքները ամէն տեսակ սեղմումների ենթարկելուց յետոյ՝ ցարի փրփրերաս կառավարութիւնը բարեհաճում է կանչել Երրորդ Դուման: Ի՞նչ է այդ էականութեան ներքին ոգին, մտքի խաղացքը, — ցարական այդ հիմնարկութիւնը «Իսկական Ռուս Մարդիկներ»ի մի ընդհանուր ժամադրավայր դարձնել. ազնուական, բիւրոկրատ, հողատէր, ֆինանսիստ-ընդոփող տարրերի՝ ցարիզմի այդ մակաբոյծ դասակարգերի համար մի մանաւոր կեղրոնատեղի կազմել, որպէսզի իր այդ ծառաների միջոցով իր քմահաճոյքը, իր դասակարգային տիրող շահերը քայլեցնի՝ յանուն ներկայացուցչական, յանուն ընտրողական, յանուն ժողովրդական իրաւունքների: Հեզնութի՞ւն, ծաղրածութի՞ւն: Բայց մի՞թէ ցարերից և բռնապետներից աւելի ճարպիկ կատակերգուներ, աւելի հնարամիտ հոսիներ կարող են լինել:

Ոչ միայն ընկերային բնաշրջման տուած փաստերը, այլ երէկուայ պատմութիւնը լուսի կերպով ցոյց է տալիս թէ՝ ներկայ օրերում, մինչև ո՛ւր և ի՞նչ կեցուածքով կարելի է քայլել ժամանակակից բուրժուազիայի հետ: Եթէ ցարական սեղմումները նրան ծանր են, «Կարմիր Ուրուականը» զարհուրելի է. ուստի պրոլետարիատի յաւելեալ — արժէքների գնով պարարտացող դասակարգից չէ, որ մենք աղդու օգնութիւն պիտի սպասենք ցարիզմը տապալելու խնդրում:

Յաղթութեան յոյսը մենք մեզնից՝ մեր դասակարգից պիտի յուսանք: Ռուս յեղափոխութեան յառաջամարտիկ տարրը պրոլետարիատն է եղած՝ և է՛. նա է որ իր յետևից քարշ պիտի տայ ոչ միայն բոլոր աշխատաւորներին, զիւղացիներին, այլև նոյն իսկ միջին և փոքր բուրժուա դասակարգերի ընդդիմադիր ոյժերին ու սրանց մտաւորականներին:

Ցարիզմ և Սոցիալ-Դեմոկրատիա, — իրարու դէմ ճակատող անվերածելի ոյժերը սրանք են:

Անշուշտ՝ Սոցիալ-Դեմոկրատիան պիտի աշխատի ընտրական քուէատուփին մօտենալ՝ որքան որ կարող է. բայց քուէատուփը ամէն ինչ չէ, և նա չպիտի կլանի իր ամբողջ եռանդը, և ոչ էլ ներկայ Դուման՝ որից կարելի պիտի լինի մի բան յուսալ: Բանի որ քաղաքական հաստատութիւնները իշխող դասակարգի տիրապետութեան գործիքներն են, պրոլետարիատը անտարբեր չի կարող մնալ, նա պիտի ջանայ այդ գործիքը չեղոքացնել, փշրել, իր ի՛սկ՝ տիրողի դէմ

դարձնել և քաղաքական այնպիսի նոր հաստատութիւններ առաջ բերել, որ ինքը կարողանար աւելի՛ առաջ երթալու պայմաններ ունենալ։ Թոյլ չտալ որ Դուման յարիւնի նեցուկը դառնայ, պրոլետարիատ անել նրա ոչնչութիւնը, հակառակորդների դէմ դնել սոցիալիստական սկզբունքները, ժողովրդին ներկայացնել ներկայ բէժիմի ապիկարութիւնները և նրա ծառաների թագուն նպատակները, ի հարկին և՛ "պայթեցնել" Դուման։ Այդ գործը — այդ բոլորը տաքտիկայի մասերը պիտի կազմեն, բայց միայն մասերը։ Ամբողջութեան լրացուցիչ մասերը ա՛յլ տեղ պիտի փնտռել։

Քանի որ պատմութիւնը ասում է թէ դասակարգերը տեղի չեն տալիս առանց խորտակուելու, առանց արիւն հոսեցնելու, ուստի տապալելու, արիւն թափելու, դասակարգային տիրապետութիւնը ջախջախելու իրական գործիքի պատրաստութեանը ամենից աւելի մեծ ոյժ պիտի տալ, — և գահեր փլցնող, դասակարգային նուաճումներ յառաջ բերող գործիքը՝ Մարտական Ոյժն է։ Ո՞ր ժողովուրդն է կարողացել շատ ու քիչ քաղաքական ազատութիւն ձեռք բերել՝ առանց արիւնի, առանց տիրող դասակարգի իրական ներկայացուցչի պրուիսը թռցնելու։ Յեղափոխական Ոյժը ամենից առաջ, — ահա՛ ընդհանուր նշանաբանը, որին մեծ տեղ պիտի տալ առօրեայ գործունէութեան մէջ։ Կազմել, յարդարել Մարտական Ոյժեր, տալ նրան լայն ծաւալ, մի կողմից պատշաճաւոր յարձակումներով և գործունէութեամբ քայքայում, անկազմութիւն յառաջացնել Թշնամու Բանակի մէջ, միւս կողմից յամառ և յարատև ջանքերով զինու ապրստամբութիւնը պատրաստել, — ահա տաքտիկայի միւս մասերը։

Մինչև որ զինու ապստամբութիւնը յաղթող չհանդիսանայ. մինչև որ ռուս յեղափոխութիւնը հին Ռուսիայի ներկայացուցիչների գլուխները թաւալգոր թափրտալ չտայ կողմերի մէջ — ո՛չ Նոր Ռուսիան կոտրապետի, և ոչ էլ մենք յարիւմի ճանկերից կազատուենք։

Եթէ յարիւմը մի էականութիւն (entité) է, այդ էականութեան գլուխը պիտի հանելով է՝ որ մենք յաղթութիւն պիտի տանենք։ Եւ այդ պիտի անի Մարտական Ոյժը։

Մեր բաժնի մէջ մենք չենք թերանալ։

ԵՒՐՈՊԱ, ԹՒՐՔԻԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(Շարունակութիւն նախորդ թուից)

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Այժմս տեսնենք թէ ի՞նչ են մտածում Թիւրքիայի բաղկացուցիչ ժողովուրդները ընդհանրապէս, քրիստոնեաները՝ մասնաւորապէս։

Թիւրքիայի բաղկացուցիչ ժողովրդներից և ո՛չ մէկը որ և է վստահութիւն կամ հաւատք ունի Թուրք կառավարութեան և նրա խոստումների վրայ։ Ինչքան էլ որ գծագրուած օրէնքներ և կանոններ լինեն, ինչքան էլ բարենորոգչական տրամադրութիւններ դրի առնուեն, — ժողովուրդը համոզուած է, որ դրա հետևանքը կլինի այն, ինչպէս մինչև յարդ եղած է, այսինքն դարձեալ սուլթանականութիւն՝ իր ընդարձակ յատկութիւններով։ Դարերի փորձը նրանց դրել է այն համոզման մէջ, որ Թուրք կառավարութիւնը արմատապէս չի փոխուիլ, ինչքան էլ որ արտաքին խթանը սուր լինի։ Քրիստոնեայ ժողովուրդները այն կարծիքն ունին, գուցէ և չափազանցուած, որ տիրապետող Թուրքը երբէք չպիտի ընդունի ցեղերի բացարձակ հաւասարութիւնը իրականի մէջ, որքան էլ որ սակեղծ բառերով բարի ցանկութիւններ "ոպրդեցնուեն օրէնսդրքերում։

"Ձկայ ծուխ՝ առանց կրակի"։ Ինչքան էլ վճիռը խիստ լինի, այնուամենայնիւ պատմական մի շարք իրողութիւններ, կարծես, ապացուցանելու ժողովրդային զանգուածների մտածումները։ Դիւլհանէ, Խաթթի-Հիւմայուն, զանազան իրադէպների դէպքեր, "Դէստուր", տեղական կրօնա-ազգանուագրական տրամադրութիւններ՝ պատմական այդ բոլոր փաստերը վկայ են հաստատելու համար, որ արդարև "ձկայ ծուխ՝ առանց կրակի", ուրեմն և ժողովուրդները կարող են իրաւունք ունենալ յուսալ և շրջահայեաց լինելու։

Պր. Սարիզ, Սալոնիկի ֆրանսիական հիւպատոսը, 1902-ի դեկտեմբերի 15-ին գրում էր. "Այնքան ժամանակ՝ որքան որ կաւելի օսմանեան տիրապետութիւնը, ինչքան էլ կատարեալ, ինչքան էլ հայրական լինի իր վարչութեան եղանակը, այնուամենայնիւ երբէք չպիտի կարելի լինի յուսալ թէ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը լիապէս գոհ կլինի։ Որովհետև նրանց իւրաքանչիւրը աշխատում է վերջնականապէս դուրս գալ Թուրք իշխանութեան ձեռքից՝ կամ միանալով այն ազգին, որի հետ ինքը կապուած է լեզուի և արեան կապերով, կամ մի այնպիսի ինքնավարութիւն ձեռք բերելով՝ որ նրան կատարդերակշռութիւն։"

Պր. Սարիզի մատնանիշած այդ երևոյթը ո՛չ պատահականութեան, ո՛չ քմահաճոյքի և ո՛չ էլ ազգայնական փառասիրութեան ու ցեղային տենչանքների հետևանք է։ Թուրք քաղաքակրթութեան՝ աւելի ուղիղ պիտի լինէր ասել՝ Թուրք պետական պատմութեան փիլիսոփայութիւնն է այդ արդիւնքը յառաջացրել և քրիստոնեայ ժողովրդներին իրաւունք տուել մտածելու թէ ուրիշ ճար չկայ, եթէ ո՛չ կա՛մ անջատուել և կա՛մ քաղաքական այնպիսի կացութիւն ձեռք բերել, որ Թուրք կառավարութեան պետական մասը այնտեղ մուտք գտնել և խաւնել չկարողանար։ Եթէ Թիւրքիայի բաղկացուցիչ ժողովուրդները այլապէս են մտածում, քան ուրիշ բաղկացուցիչ պետութիւնների մէջ գտնուող ժողովուրդները, — դրա միակ պատասխանատուն Թուրք պետութիւնը ինքն է։

Կ. Պոլսի ֆրանսիական քաղաքական գործակատար պր.

Բոպպը, 1905-ի օգոստոս 10-ին, մի նամակով յայտնում էր պր. Ռուվիէրին հետևեալը. "Պարզ երևում է որ իրերի այս ողբալի կացութեան մէջ Մակեդոնացիները շա՛տ քիչ նշանակութիւն են տալիս պետութեանց յայտարարած բարեռորոգումներին ("Դեղին Դիրք" 1903-1905, No 150)։ Որքան էլ որ սա ցաւալի լինի, այնուամենայնիւ դատանքաժան հետևանք է Մակեդոնիայի ներկայ կազմակերպութեանը, ուստի հիմունք կայ պաշտպանելու այն կարծիքը՝ թէ ինչքան էլ բարեռորոգումները բարելաւելեն մի դրութիւն, դարձեալ նա ճիշտ կմնայ դժուար, մի շատ ծնող ցաւալի միջադէպերի, և այդ այնքան ժամանակ, որքան որ թուրքը կը-միրապետի քրիստոնեայ ազգաբնակչութիւններին, կամ գէթ այնքան ժամանակ՝ որքան որ թուրքը կմնայ "թուրք",—ինչքան որ պատմութիւնը և դարերի պատերազմները ատելութիւն են դրել այս բառի մէջ։ Բէֆորմները կարող են Մակեդոնիայում մակերևութային բարելաւութիւններ առաջ բերել, բայց նրանք արմատախիլ չեն անիլ չարիքը։ Այդպէս են մատածում բոլոր նրանք՝ զրողներ, պետական անձնաւորութիւններ, դիւանագէտներ, որոնք խոտապահանջ են դէպի բարեռորոգումների գործը և թերահաւատ՝ դէպի նրա բերած առաւելութիւնները"։

Սա է քրիստոնեայ ժողովրդների զանգուածային՝ գերակշռող մասի կարծիքը դէպի թուրք կառավարութիւնը և նրա յանձն առած բարեռորոգումները կամ բարելաւութեան նկատումներով արած խոստումները։

Պր. Բոպպի արձանագրած իրողութիւնը իր ստուգութիւնը ունի նոյն իսկ Միւրյշտէգի համեստ ծրագրի մէջ. էլ ի՞նչ խարդաւանանքներ չարքեց թուրք կառավարութիւնը այդ ծրագիրը ի դերև հանելու. և օսմանեան պետական անձինքների հէնց այդ ողին է եղել պատճառ, որ Մահմէտ Էֆենդի, լորդ Ստրատֆորդից սկսած՝ Թիւրքիայի վիճակով հետաքրքրուող ամէն պետական անձինք այն վերջնական համոզմանն եկեղ, որ Թիւրքիայի բազկացուցիչ ժողովրդների համար կա՛մ անջատում կա՛մ ինքնավարութիւն, և պատմութիւնը իր ամբողջութեամբ այդպէս մատածողներին և գործողներին արդարացրել է։

Եթէ խնդիրը արմատապէս ուսումնասիրուի, կտեսնուի որ Արաբը, Ալբանացին քրիստոնեայ ժողովրդներից տարբեր կարծիքներ չունին։ Արաբների անջատական ձգտումը որոշ է։ Ալբանացիները իրերի ներկայ դրութիւնը մի կերպ քաշքըշում են, համոզուած լինելով որ այդ չի կարող երկար տևել, ուստի սպասասուում են իրենց բաժինը խլել։ Նոյն իսկ Բրդերից շատ յեղեր այժմ թերահաւատութեամբ են վերաբերուում դէպի սուլթանականութիւնը և նրա ծրագիրները։

Եւ քաղաքական գիտակցութեան մի յայտնի աստիճանի վրայ կանգնած Արաբ, Ալբանացի ժողովուրդները ու նրանց ձգտումներին այժ տուող երիտասարդութիւնը մի՞թէ սխալուում են իրենց հայեացքների մէջ,—երբէք. նա՝ ո՛վ որ փաստայի տեղեկութիւն ունի օսմանլըլըդի դիւային քաղաքականութիւնից, կհամոզուի որ այդ ժողովուրդները այլապէս չէին կարող մտածել։

Իրերի այս ընթացքի մէջ ի՞նչ է մտածում թուրքը ինքը։

Այստեղ, ի հարկէ, խօսք չի կարող լինել թուրք ազնուական այն անանցացած տարրի մասին, որ ապրում է միայն Արևելեան շուայտութեանց մէջ թաւալգլորուելու համար։ Խօսքը՝ կառավարող, թուրք ազգայնական տարրի նկատմամբ է։

Որոշ է տիրող դասակարգի այդ պատմական դիրքը,—նա արտաքին խթանից մղուած՝ երբեմն բարեռորոգումներ ներմուծելու կամէութիւնի ցոյց տալիս, բայց դժուարութեանց և ճնշման առաջին րոպէն անցնելուց յետոյ, շարունակում է մնալ առաջուանը՝ թրքականը, այսինքն թուրքը թուրք էլ ուզում է մնալ, չնայելով որ 3-400 տարի եւրոպական քաղաքակրթութեան հետ մերձնայտրաբերութեան մէջ է։ Առ առաւելն՝ այդ մասը ուզում է Եւրոպայից փոխ առնել նորագոյն զէնքեր և պատերազմական կերպեր, ու մնայն այդքան, մնացածը առաջուան՝ հին թրքական շաւղով։ Պարզ է ուրեմն, որ այսօրուայ թուրք կառավարող՝ տիրող տարրը այլևս կոճղայել է, որովհետև պետական արմատական որ և է փոփոխութեան դէմ է. եթէ այդպէս՝ ապա նրա պատմական դերը վերջացած կարելի է համարել, քանի որ իր աչքը աւելի դարձրել է դէպի հին՝ քան դէպի նոր օրերը։ Այդ մասին մի շատ ինքնատիպ իրողութիւն է պատմում պր. Ռընէ Պինոնը։ Մի թուրք սպայ նրան ասել է. "Աւելի լաւ է որ մենք քրիստոնեաներին թողնենք այս երկիրները (Բալքանեան), ուր նրանք աւելի բազմաթիւ են։ Մենք պէտք է որ յետ քաշուենք դէպի Անատոլիա, ձգելով Եւրոպան՝ որ մեր հայրենիքը չէ։ Այնտեղ մենք մեզ կբարեկարգենք՝ մեր սեպհական օրէնքների և աւանդութիւնների համաձայն, մենք մեր հին հաւատքին կը վերադառնանք. և նորից կը նստենք դէպի աշխարհակալութիւն, և այս անդամ մինչև Վիէննա կերթանք"։

Սպայի այդ կարծիքը յատկանշական է այն տեսակէտով, որ նա արտայայտում է ամբողջ Ծերունի Ռնացիոնալիստ տարրերի հայեացքը դէպի ներկայ իրականութիւնը և գալիք բարդութիւնները։ Թուրք կառավարող դասակարգը արդէն վառուց է, որ այն համոզումն ունի գոյացրած՝ թէ ինքը մի օր յետ պիտի քշուի դէպի Անատոլիա. բայց հարց, նոյն իսկ այնտեղ՝ պիտի կարողանա՞յ նա իր երազը իրագործել,—շատ հանգամանքներ այդ աւելի քան կասկածանքի են ենթարկում։

Եթէ թուրք կառավարող դասակարգը և իր մարակով առաջնորդուողները ժամանակի հոսանքից յետ են մնացել, ուրիշները՝ ընդհակառակը, այնքան առաջ են գնացել, որ երազուած այդ սպասմանները այլևս անկարելի է գտնել ներկայ ժամանակներում. ամէն ինչ փոխուել, յառաջ է գնացել։

Եւրոպականին մատենա՞լ թէ ո՛չ,—այդ հարցը երկար ժամանակ վիճաբանութեան նիւթ է եղել թուրք պետական անձնաւորութիւնների միջև. շատերը պնդել են, որ եւրոպականը թոյն էր, հարկաւոր էր նրանից հեռու մնալ, և որքան շա՛տ, այնքան աւելի լաւ։ Այդպէս մտածողների յաջորդները այժմ այն եզրակացութեանն են եկած, որ իրենց բոլոր ձախորդութիւնների, թերութեան և քայքայման պատճառը պիտի որոնել Եւրոպային մատենալու այն փորձերի և միտումների մէջ, որ արեցին մի քանի, այսպէս ասած, բարեռորոգիչ միալեռներ, ուստի քանի դեռ ամէն բան կորած չէ՝ հարկաւոր է յե՛տ, յե՛տ երթալ, կարծեցեալ փրկութիւնը այնտեղից գտնելու։ Ցե՛տ, յե՛տ՝ բայց պատմական օրէնքներն էլ այդ ազգակին դիմաց մա՛հ, մա՛հ են դրած։ Եւ ո՛չ մի եւրաշխատութիւն չկայ կարծելու թէ թուրք դեկավարիչ տարրը պատմութեան սղոցից կարող է ազատուել. նա պիտի երթայ, և գուցե իրեն հետ էլ գերեզման տանի թուրք պետութիւնը։ Այդ մասին հաղիւ թէ տուր տարակարծիքութիւններ լինին։

Վճռական խնդիրը, ինչպէս մի քանի անգամ նկատել ենք, մնում է բուն Թուրք ժողովրդին, հասարակ մասսային, որը, դժբախտաբար, այժմ մտաւոր ցանկալի բարձրութեան վրայ չի գտնուում և իր գիտակցութիւնը մթագնող, թմրեցնող ազդակներ շատ կան։ Թէ այս օրերիս մէջ՝ իրերի ներկայ կացութիւնը շուտ տուող պատմական ազդակ կդառնայ նա, ընդունակ, կարո՞ղ կլինի պատմական այն խոշոր մխսիան ստանձնել, որի էութիւնը պիտի լինի սուլթանականութիւնը տիրապետութիւնից վայր գլորել և Թուրքիան դարձնել այնպիսի մի նորագոյն պետութիւն, ուր բոլոր ազգերը և ցեղերը անխոնջ վայելէին՝ քաղաքական և տնտեսական այն բոլոր իրաւունքները, ինչոր տալիս է մի նորագոյն պետութիւն, — դա դեռ ևս խնդիր է, և շա՛տ մեծ խնդիր։ Հարցի այդ մասը դեռ ենթադրութեան և գուշակութեան շրջանի մէջն է։ Երրորդ՝ է ասել, սակայն, և՛ այն որ՝ մի որոշ չափով, Թուրք ժողովրդի մէջ արդէն սկսել են փոքրիկ խլրտումներ և դժգոհութիւններ, բայց թէ նա կմտնի՞ բուն յեղափոխական շարժման մէջ և չանք կանի՞ սուլթանականութիւնը խորտակել — դա դեռ հարցական նշան է։

Այն էլ պէտք է ի նկատի ունենալ, որ այդպիսի կարևոր խնդիրների յաջողութեամբ վճռելու համար շատ մեծ ժամանակ էլ չկայ, — կապիտալիստական Եւրոպան իր շոշափելիքներով այնպէս է գալարել Թուրքին, որ նա հազիւ թէ ճողոպրի իր վրայ ծանրացած ճնշումից, եթէ մի առանձին կորով և ճիգ երևան չդնի։—Թուրքը դժուար թէ կարողանայ ջատագովի դառնալ այս վճռական օրերի մէջ։

Ցամենայն դէպս՝ եթէ Թուրք ժողովուրդը ռամիկ-պետական-վերանորոգչական ուղղութեամբ գործելու լինի, մեր անկեղծ և անվերապահ աջակցութիւնը պիտի ստանայ։ Եւ որովհետև խնդրի այս մասը իրականութեան բաժինը դեռ չի դարձել, առ այժմ այդ ենթադրականը մի կողմ թողնելով՝ շարունակենք մեր ասելիքը։

Արդ, այժմ Թիւրքիայում մեզ ներկայանում են պատմական հետևեալ այժերը։

Մի կողմից եւրոպական մեծ պետութիւններ, որոնցից և ո՛չ մէկը Թիւրքիայի խնդական բարեկամն է, այս բառի քաղաքական նշանակութեամբ. նրանք բոլորն էլ նպատակ ունեն այդ երկիրը շահագործել, քանդել և նրա այս ու այն մասը իւրացնել, Թուրքի ձեռքից դուրս գալուն օգնել։ Բոլորի էլ նպատակը միևնոյնն է, որքան էլ որ իրենց կիրառած մեթոդների և խօսքերի մէջ տարբերութիւններ լինեն։ Նրանցից ո՛չ մէկը շիւղի չափ հաճոյում ունի, որ Թիւրքիան կայող է արմատապէս բարեկարգուել, իր մէջ բովանդակուած բոլոր ազգութիւններին բաւականութիւն տալու աստիճան։

Միւս կողմից՝ Բալքանեան փոքր պետութիւններ, որոնք ինչքան էլ իրարու հետ առայժմ անհաշտ, և Մեծերի քաղաքական բաղկացութիւններից կախումն ունեցողներ, այնուամենայնիւ նրանք բոլորն էլ միում են Թիւրքիայի սիսակալ թշնամին. համաձայնութեամբ կամ անհամաձայնութեամբ՝ նրանք Թիւրքիան քանդող այժեր են։

Երրորդ կողմից գալիս է յեղափոխական տարրը՝ Մակեդոնացի, Արաբ, Ալբան, Հայ, Ցոյն։ Իրաւ է մինչև յարդ այդ այժերի մէջ մի առանձին հասկացողութիւն չի եղել, բայց նրանց բոլորի էլ նպատակն է, առ նուազն, Թրքական ներկայ քաղաքական և տնտեսական statu quo-ն խորտակել։ Դրանցից ամէն մէկն ունի իր նպատակին համակրող մի կամ մի քանի պետութիւններ, ինչոր իր մասնաւոր կարևորութիւնն ունի։

Եւ խնդրին աւելի կսարդուի, երբ տանք թէ դրանցից և ո՛չ մէկը համալեռական ձգտում ունի, ընդհակառակը՝ բոլորն էլ բացարձակ անջատականներ են կամ ինքնավարականներ։

Չորրորդ կողմից, այս բոլոր տենչանքների միջից, մեզ ներկայանում է պաշտօնական Թիւրքիան, որ նստած իր խարխլած թախտի վրան, անձնատուր է եղել անտարբերութեան ալիքներին։ Ինչքան էլ ճարտար լինին նաւապետները և կորովալից՝ նաւագները, այնուամենայնիւ խորտակումը ստուգութեան սահմանի մէջ պիտի դնել, որովհետև բնութեան օրէնքները անշեղի են։ Եւրոպական պետութիւնների հակամարտ ձգտումներից օգտուել, ներքին տարրերը իրարու դէմ հանել, այդ բոլորը կարող են, որոշ չափով, Թիւրքիայի անկումը, որպէս պետութեան, յապաղեցնել, բայց ո՛չ թէ ընդ միշտ կասեցնել, ապահովել։ Գալիա-տիներով (ամոքարեղերով) փրկուող պետութիւն դեռ չի եղել։ Նամանաւանդ որ Թիւրքիայի շուրջը պտտող խնդիրները միայն քաղաքական բնաւորութիւն չունեն, այլ և՝ ընկերային, տնտեսական. ու քանի որ տիրող տարրը իր դարևոր կեանքով կատարեալ անընդունակութիւն ցոյց տուել նոր կեանք հասկանալու և աշխատում է ներկայացած խնդիրները վճռել այն մեթոդներով, որոնք արդէն զատապարտուած են ժամանակակից յառաջադիմութեան և քաղաքակրթութեան կողմից, ասել է թէ իր անկումը անխուսափելի է։

Նկատենք և այն, որ մինչդեռ երբեմն Թիւրքիայի ամբողջականութիւնը եւրոպական հաւասարակշռութեան համար անհրաժեշտ գործել տարը էր նկատուում, այժմս այդ հին մտքին էլ արդէն թողնուած է շատ պետութիւնների կողմից։ Եւ ընդհանուր խորհրդածութիւնը դառնում է այն հարցի շուրջը, թէ ի՞նչպէս լուծել եւրոպական ընդհանուր բնաւորութիւն ունեցող խնդիրները՝ առանց Թիւրքիայի։ Ի՞նչն է մեզ եւրաշխատութեան մէջ չհաւատալու, որ մի օր ընդհանուր հաճաձայնութեան ժամը չէ կարող հնչել՝ պատմութեան ցոյց տուած եղանակներին և որոշումներին համեմատ։

Մատանիշ՞ նք և՛ այն, որ Մակեդոնիայի ինքնավարական կազմակերպութիւնը հետզհետէ հաւանականութեան և կարելիութեան սահմանների մէջ է սկսում մտնել։

ՄԵՐ ԱՆԵԼԻՔԸ ԵՒ ԴԻՐՔԸ

Արդ, երբ խնդիրները այսպէս են դասաւորուած, ի՞նչ պէտք անենք մենք, նրանք՝ որոնք Ցաճկա-Հայ Դատ ունեն և այդ Դատի յեղափոխական լուծման ազդակն են ուզում հանդիսանալ։

Ցաք, ապահով անկիւններից բարոյագիտական և քաղաքագիտական դասեր կարդալը "բուրժուա", "անսիրա", "Շահանդիր", "եսամոլ" Եւրոպային՝ դա գործ չէ։ Եւրոպան ո՛չ մեր բարոյագիտական խրատներին կարիք ունի և ո՛չ էլ մեր քաղաքագիտական դասերին։ Նրան դաս տալուց առաջ՝ մենք մեզ դաս տանք։ Ո՛չ հայհոյանքով, ո՛չ քննադատութեամբ, ո՛չ պաղատանքով ու մարդասիրական և այլասիրական ձգտումներից զրկուած է, որ Եւրոպան, նրա այս կամ այն մասը, մեզ աջակցելու, մեզ ազատելու պիտի գայ Թուրք լծից։ Նա իր հաշիւները ունի։

Եւ հենց այդ հաշիւները նրան կստիպեն ասպարէզ գալ միայն այն ժամանակ՝ երբ հայ յեղափոխական այժը, այդ սոցիալդեմոկրատութեան պայմանները կյառաջացնի, իսկ մինչ այդ՝ մենք մեզ հարուածած կլինենք՝ Եւրոպայի ինքնաբերաբար զարտուղանը սպասելով, նրա մարդասիրական, այլասիրական միջամտութեան վրայ յոյս դնելով։

Բողոքով, միթինգներով, պրոպագանդայով, լրագրական յօդուածներով չէ, այդ լաւ հասկանանք, որ շահագրգիռ պետութիւններին Հայաստան պիտի քաշենք, այլ երկաթեայ կարթով, զէնքով, յեղափոխական գործունէութեամբ։

Թողնենք Տաճկա-Հայերին և Տաճկա-Հայկական Դատը իրենց բախտին, ինչ կլինի՝ թող լինի, և մենք այժմս ջանանք նախ Ռուսիան սահմանադրական ռամկավարութիւն դարձնել, որպէսզի իր սահմանների վրայ սուլթանականութեան չհամբերող սահմանադիր երկիրը մի օր յառաջ երթայ և բռնութեան ղեկակը խորտակի, ու մենք էլ այդպիսով ազատուինք, — ասում էին, այսպէս, մի օր։ Եւ որովհետև այդ թէզը Բաղդադի ծոյլերի էլ ծիծաղը կշարժէր, ուստի այդ մանկամտութիւնը մի անգամ ընդ միշտ դուրս պիտի շպրտել զարծօն շարքերից, և ուրախ ենք որ արդէն շպրտուած է։

Յարիզմի դէմ պէտք է մարտնչել ինքն ըստ ինքեան, ոչ թէ այն տեսակէտով, թէ յարիզմը կործանելով՝ ռուսական արտաքին քաղաքականութիւնը նպաստաւոր կլինի Հայկական Դատի լուծման համար, — ո՛չ. որովհետև այդ տրամաբանութեամբ մենք ստիպուած պիտի լինէինք և՝ գերմանական կայզերիզմի դէմ մարտնչել, որպէսզի նա էլ ընկնի և այդպիսով Գերմանիայի արտաքին քաղաքականութիւնը աւելի յաջող պայմաններ ներկայացնի։ Անշուշտ՝ յարիզմի անկումով և սահմանադրական Ռուսիայի ստեղծումով մենք աւելի յարմար պայմաններ կունենանք Կովկասից գործելու, բայց այդ հանգամանքը միայն հերիք չէ, որ մենք Հայկական Դատը թողնենք, քանի զիտենք Թրքական ներքին քաղաքականութեան ձգտումները, և միւս կողմից՝ առանց սխալուելու՝ կարելի է ասել, որ սահմանադրական Ռուսիայի արտաքին քաղաքականութիւնը, իր էական գծերի մէջ, ոչինչով չպիտի տարբերուի յարիզմի արտաքին քաղաքականութիւնից։ Ռուս բուրժուազիան հրեշտականման տարրերից չէ կազմուած, նա էլ ոսկոր և մարմին ունի, նման ուրիշ երկրների բուրժուազիաներին, և այդ ոսկր ու մարմինը նրան կստիպի դաղութային այն քաղաքականութեան հետևիլ, որ ունին այսօրուայ ուրիշ երկրի բուրժուաները՝ նրանք, որոնք իրենց երկրի քաղաքական դեկը իրենց ձեռքն են առել։

Մենք յարիզմի դէմ պիտի կռուենք, որովհետև ապրում ենք երկրի մի տարածութեան մէջ, ուր նրա օրէնքներն են իշխում, ուր նրա շահերը յառերժացնող պետական կազմն է տիրում։ Չլինեը յարիզմը, տիրող լիներ ռուս բուրժուազիան, մի՞թէ մենք չպէտք է կռուէինք։ Սահմանադրական Ռուսիա, հանրապետութիւն՝ սրանք բոլորը մեզ համար կռուի աւելի կամ նուազ յաջող պայմաններ միայն կարող են բերել. կռիւը պիտի շարունակուի՝ մինչև պրոլետարիատի քաղաքական տիրապետութիւնը, մինչև դասակարգերի ջնջումը՝ սոցիալիզմի իրականացումը այդ երկրի մէջ։

Ռուսիայում մենք չենք էլ կռուում ինքնապաշտպանութիւնից մղուած. եթէ յարական բոլոր օրէնքները մեզ դնէին ամենասպահով պայմանների մէջ, Թաթարը մեր մազին անգամ չդիպչէր, — մենք դարձեալ պիտի կռուէինք նրա դէմ։

Մենք կռուում ենք, և պիտի կռուենք, յարիզմի դէմ, որովհետև այնտեղ ունինք պրոլետարիատ, աշխատաւոր դասակարգ, և մենք այդ աշխատող, բայց չգոյութիւն դասակարգի ներկայացուցիչն ենք. այնտեղ՝ ուր կան դասակարգեր՝ այնուհանդերձ, աւատապետներ, կապիտալիստներ և նրանց շահագործութեան առարկայ եղող պրոլետարներ ու աշխատաւորներ—կռիւը, դասակարգային կռիւը, անխուսափելի է, և մենք արտայայտողն ենք այդ դասակարգային կռուի. ուրեմն մենք Ռուսաստանում կանգնած ենք դասակարգային կռուի վրայ։

Հնչակեան Կուսակցութիւնը՝ Հայ իրականութեան մէջ՝ երևան է եկել, իր հիմնական սկզբունքներով, որպէս Ազգային Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութիւն (Parti Social-Démocrate National) և այսօր իր դաւանած սկզբունքների վրայ կանգնած, սոցիալ-դեմոկրատական իր կռիւն է մղում և՝ Ռուսաստանում (Կովկասում) իր տեղական կազմակերպութիւնների միջոցով։ Հնչակեան Կուսակցութիւն կամ Հայ Ազգային Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութիւն (Social Démocrate National)՝ դրանք հոմանիշ արտայայտութիւններ են մեզ համար։ Հնչակեան Կուսակցութիւնը մեզ համար լոկ յեղափոխական (révolutionnaire) մի կուսակցութիւն չէ։ Նա յեղափոխական է, այս բառի Սոցիալ Դեմոկրատական մաքրոյը առած։ Ո՛չ միայն մենք պարզ յեղափոխականներ չենք, այլ մենք նոյնքան հեռու ենք Սոցիալիստ Յեղափոխականներից, որքան որ զուտ ազգայնականներից (nationaliste) և բուրժուա կուսակցութիւններից։ Պարզաբանութիւնը աւելի կարկառուն դարձնելու համար ասենք և՝ այն, որ առանց Սոցիալ-Դեմոկրատական սկզբունքների՝ չկայ Հնչակեան Կուսակցութիւն, ինչպէս և չկայ Հնչակեան Կուսակցութիւն, առանց Հայկական Դատի (Տաճկա-Հայ խնդրի)։ Ուրեմն՝ քանի որ Սոցիալ Դեմոկրատական գործունէութեան իրական հող կայ Կովկասում և Ռուսաստանում, մենք պարտաւոր ենք այնտեղ աշխատել, որովհետև Սոցիալ-Դեմոկրատներ ենք, այսինքն հայ պրոլետարական դասակարգի ներկայացուցիչներ։ Ահա՝ թէ ինչ տեսակէտով է որ մենք կռուել և կռուում ենք յարիզմի դէմ։ Պարզ է այստեղից, որ յարիզմը եթէ Հայկական Դատի առաջին պաշտպանն իսկ լիներ, մենք դարձեալ նրա դէմ պիտի կռուէինք, և այդ հասկանալի է։

Ուրեմն, ո՛չ Հայկական Դատը թողնել, և այն հնթարկել, ստորադասել ռուսական կայսրութեան մէջ մղուող մեծ պայքարի իրադարձութիւններին, և ո՛չ էլ Հայկական Դատի տեսակէտով Կովկասեան (Ռուսաստանի) մեր կռուին դադար տալ, — երկուսն էլ անկարելի և հակաբնական կլինեը մեզ համար։

Երկու բռնապետութեանց սահմանները ջնջուած նկատելով՝ մենք մեր կռիւը պիտի մղենք երկու ճակատից էլ. այդ կռիւը երկու տեղն էլ, ինչքան որ, տեղական պայմաններից բղխող, իր ձևերի և տարբերակի մէջ նիւանսային տարբերութիւններ ունենայ,—իր ներքին խմաստով, իր ընկալունքներով սոցիալիստական է՝ այդ է մեր դիրքը և մեր տեսակէտը։

Սոցիալ-Դեմոկրատական հողի վրայ կանգնած, դասակարգային կռիւ մղել Ռուսաստանում,—ձգտել սոցիալիզմի իրականացմանը, և միաժամանակ՝ իրենց պայմանների ներածին չափ՝ աղդակ հանդիսանալ Հայկական Դատին, —այդ է՝ եղած, և այդ էլ կլինի Հնչակեան կազմակերպութիւնների գոյութեան իրաւունքը Ռուսաստանի և Կովկասի մէջ։*)

Մեր անելիքի մի մասը այս կլինի։

Անցնենք միւսը։

Մենք չենք էլ կարող Հայկական Դատը կլանել տալ Թուրքիայի ամբողջութեան պահպանութեան գաղափարի մէջ, այսինքն չենք կարող ասել թէ մենք առանձին Հայկական Դատ չունինք, այլ մի ընդհանուր թուրք կայսրութեան, որի ամբողջական պահպանութեան, վերանորոգութեան և կայունութեան համար է, որ մենք արիւն ենք թափում, — այդ նպատակով չենք կարող կռիւ մղել ո՛չ Մակեդոնացու և ո՛չ Արաբի դէմ, որոնք բաժնուել են ուզում, և ո՛չ էլ եւրոպական այն պետութիւնների՝ որոնք Թուր-

(*Թէ Տաճկա-Հայ Դատը պաշտպանելով՝ մենք հակասում ենք սոցիալիստական սկզբունքներին, Կովկասում մղած դասակարգային մեր կռուին և կամ թէ զրանով երկրորդականութիւն (զուպիզմ) ենք ստեղծում մեր Կուսակցութեան մէջ,—այդ խնդրին մենք նորից պիտի վերադառնանք, քանի որ այդ տղղութեամբ մի քանի առարկութիւններ եղան մեր դրածների դէմ։

քիայի անկմանն են աշխատում։ Պատմական այդպիսի մի մխսիա դէթ մենք չենք կարող մինակ յանձն առնել, նախ որ դա մեր ուժերից շատ բարձր է, և երկրորդ՝ այդպիսի ձգտում ունեցող տարրեր չկան առայժմ, որ մենք էլ ներկայացած պայմանները կշռատտենք, ըստ այնմ էլ մեր վերջին խօսքն ասենք։ Ուրեմն մեզ՝ դէթ մեր Կուսակցութեան համար, չկայ Թրքական համապետական խնդիր, այլ կայ միայն Հայկական Խնդիր. ուրիշ է թէ մենք կարող ենք համերաշխութիւնների մէջ մտնել Թուրքիայի մէջ եղող այլ տարրերի հետ զանազան տեխնիկական խնդիրների համար, բայց դա պատճառ և արդելք չի կարող լինել, որ մենք ուրոյն Հայկական Դատի գոյութեան իրաւունքը չպաշտպանենք և նրա լուծմանը չաշխատենք։

Արդ, մեր գործը պիտի լինի մեր հայրենիքի՝ Հայաստանի մէջ ապրող այլազգեղ տարրերին քարոզել համերաշխութիւն, նրանց հասկացնել, որ մենք կուռում ենք մի կառավարութեան, իրերի ներկայ կարգը ստեղծող մի բէժիմի դէմ, որպէսզի ձեռք բերենք քաղաքական և տնտեսական այնպիսի մի կացութիւն, ուր ամէն ոք, առանց ցեղի և կրօնի խտրութեան, կարող լինէր մարդավայել, բարեկեցիկ մի կեանք վայելել։ Ստեղծե՞նք մեր երկրի մէջ իրերի մի այնպիսի կացութիւն, որ մեզնից՝ այնտեղ ապրող ժողովրդից կախում ունենար, — այսինքն մենք մեզ վարէինք, մենք մեզ կառավարէինք։ Մեր ծրագրի մէջ չկայ մի ժողովրդի տիրապետութիւն միւսի վրայ։ Ամէն ժողովուրդ իր գոյութեան անկաշկանդ պայմանները պիտի ունենայ և լինքն իր բախտի տէրը. ուրեմն մենք նպատակ չունենք օսմանցիների լծից դուրս հանել նրանց և հայկական լծի տակ առնել,—երբէք։

Հէնց դրա համար էլ, մենք Հայաստանի ինքնավարութեան սկզբունքն ենք պաշտպանում, ինչպէս և մի ռամկապետական սահմանադրական պետութեան, երբ թուրք համապետական խօսքեր են գալիս զանազան անկիւններից, և որոնք խօսքերի շրջանից իրականութեան մէջ մտնելուց միշտ հեռու են մնում։

Հայկական Դատ կայ,—ի՞նչ անել. կարելի՞ է այդ Դատը լուծել, կամ եւրոպական միջամտութիւն յառաջացնել, մի կամ մի քանի խումբ զինուորներ լեռան գլուխ հանելով, կամ կռուի բանեցնելով թուրք կառավարութեան զինուորների և պաշտօնեաների հետ։ Հնարաւո՞ր է այդ Դատին որ և է փոքր ծառայութիւն մատուցանել մի քաղաք կամ մի շրջան ապստամբեցնելով, զէնքի ընդվզմանդրութիւն և բաղխում յառաջ բերելով։ Շարունակե՞լ մանր ցոյցերի, պարտիզանական կռիւների դրութիւնը. կա՞յ դրանից որ և է օգտակարութիւն, — ո՛չ և ո՛չ։ Այդ բոլորը ապարդիւն և հայ յեղափոխական իրականութեան անհամապատասխան միջոցներ են, այդպիսի տաքտիկայով չի կարելի մօտենալ Հայկական Դատի լուծմանը։ Եթէ 1896-ից ի վեր Ցաճկա-Հայ իրականութեան մէջ եղած փորձերը և ձեռնարկները բաւական չեն մեր այդ թեզը հաստատելու, այն ժամանակ առնենք Ֆինիանների գործը։

19-դարու մէջ շատ քիչ յեղափոխական կուսակցութիւններ կորովի, և քաջութեան այնպիսի հրաշքներ են գործած, որքան Իրլանդական յեղափոխականները՝ Ֆինիանները։ Հակառակ իրենց թափած արտասովոր ջանքերին՝ Իրլանդական յեղափոխականները ո՛չ մեծ դրական որ և է արդիւնքի հասան, այլ հետզհետէ կորցրին, և վերջն էլ մեռան՝ հեղինակի տարոսի տակ։ Եւ ինչո՞ւ այդ, — որովհետև իրենց գործունէութեան ամբողջ ընթացքում նրանք բաւականացան անհատական ապանութիւններով և մանր ցոյցերով ու մանակի, փոքրիկ կռիւներով։ Անընդունակ լինելով իրենց կռուի պայմանները հետզհետէ ընդարձակելու և զանգուածային, ընդհանուր ժողովրդական կռուի պայմաններ ստեղծելու, նրանք հետզհետէ փոքրացան իրենց շարժումների ուժգնութեան և տարածականութեան մէջ, և վերջն այնտեղ հասան, որ անգլիական լորդերի էշերի պոչերն սկսեցին կարտել։

Հայկական խնդրի լուծմանը մխող տաքտիկան նախ աչքից բաց չպիտի թողնի Արևելեան Խնդրի ընդհանուր բնաւորութիւնը, և երկրորդ՝ միլիտարիզմը, որ ժամանակակից պետութեան գերակշռող յատկանիշներից մէկն է։

Ժամանակակից զէնքի և զինուորական ոյժի առաջ մանր ցոյցերի, փոքրիկ կռիւների փիլիսոփայութիւնը գործող դերից վայր իջել և մեռել է, որպէս վերջնական կռուի պայման։ Նա այլևս անհաշտելի և անպէտք է, որպէս կռուի վերջնական միջոց, որպէս յեղափոխութեան յաղթող ռազմադիրք։ Մանր ցոյցերը, փոքրիկ կռիւները ուելի գործի պրոլոգանդայի, զարթեցնումի ազդակներ են դարձած այժմ։ Եւ երբ եւրոպական յեղափոխական բոլոր կուսակցութիւնները թողել են կռուի այդ ձևը, մենք չենք, որ այդ հին զէնքը վրանիս առած՝ թրքական բանակների առաջը պիտի կանգնենք և Հայկական Դատ վճռենք։ — Ո՛չ. այդ տաքտիկան պիտի թողնել, և պատմութիւնը, թէ ընդհանուր և թէ մեր, մեզ ասում է որ պիտի թողնել,—պիտի թողնել, եթէ չենք ուզում մեր Հարցը լուծուած տեսնել կուսուի բացակայութեամբը, ինչոր թուրք կառավարութեան երազն էլ է։

Մինչև որ Ցաճկա-Հայ ժողովուրդը ընդհանուր, կանգուածային և երկարատև կռուի պայմաններ չյառաջացնի,—ո՛չ միջամտութիւն կայ և ո՛չ էլ սուլթանականութեան ճիրաններից ազատութիւն, դա մեզ ասում է թէ գիտութիւնը և թէ բոլոր յեղափոխուող ազգերի պատմութիւնը։ Աչքներս չփակենք իրականութեան առաջ, այլ քաշուելիս ունենանք դիտել և ըստ այնմ մեր քայլերը յառաջ ձգել։ Եթէ մենք չենք կարող ընդհանուր, ժողովրդական ապստամբութիւն յառաջ բերել, եթէ միաժամանակ մի քանի գլխաւոր վայրեր չեն կարող զարկուել սուլթանական զօրքերի դէմ, և այդ՝ ամիսներ շարունակ,—ապա խնդիրը փակուած պիտի համարել, և պարզութեամբ ասել, որ անընդունակ եղանք։

Սակայն այդ չէ մեր համոզումը, համոզում որ բղխում է մեր իրականութիւնից. մենք վստահ ենք որ Ցաճկա-Հայ ժողովուրդը այդ ոյժը, այդ կորովը ունի. վստահ ենք որ պատմական այդ պահանջին նա կարող է դիմադրուել, և հէնց դրա համար էլ մենք՝ հնչակեանները՝ Հայկական Դատի լուծման համար որոշել ենք ո՛չ թէ մանակի ցոյցեր, ո՛չ թէ մանակի կռիւներ և փոքրիկ ընդհարումներ, ո՛չ թէ դիւանագիտական աղերսարկու դիմումներ, — այլ ապստամբութիւն՝ ապստամբութիւն ընդհանուր, ապստամբութիւն ժողովրդական, ապստամբութիւն զանգուածային, ապստամբութիւն երկարատև, եւրոպական պետութեանց շահերը իրապէս խանգարելու և աղատագրուած Հայաստանը եւրոպական հաւասարակշռութեան անհրաժեշտ մի ազդակը նկատել տալու պայմանով։ Վստա՛հ մեր տաքտիկայի դիտակցութեանը, վստա՛հ մեր ընդդրկած Գործի արդարութեան և նրա հնարաւոր գործադրութեանը վրայ, մենք այդ ուղեգծով է որ պիտի ընթանանք։

Պ. Ալբերտ Վանդալը՝ "ՄԱՐԲԻԶ ԴԻ ՎԻԼԼԷՆԷՎԻ ՄԻՍՍԻԱՆ Կ.-ՊՕԼՍՈՒՄ իր յայտնի պատմական երկի մէջ՝ հետաքրքիր մի հատուած է մէջ բերում Մարքիզ դ'Արժանսոնի յիշատակագրից, որի մէջ Լուդովիկոս ԺԵ-ի մինիստրը ասած է եղել հետեւեալը. "Առաջին մեծ յեղափոխութիւնը որ կկատարուի Եւրոպայում — դա կլինի Թուրքիայի նուաճումը։ Իր վատ կառավարութեամբ, լուսագոյն զանազան անկարելիութեամբ, աւելի վատթարանալու ստուգութեամբ՝ այդ կայսրութիւնը հետզհետէ մեծապէս թուլանում է։ Օսմանեան կայսրութեան

մէջ ամէն ոք ապատամբում, զլուխ է բարձրացնում։ Ամէն ոք նրա թեւից մի փետուր է քաշում"։

Քանի որ եւրոպական Մեծ կոչուած պետութիւնների Թիւրքիայի ամբողջութեան և սուլթանի իրաւունքների պահպանութեան բուն նպատակն է "փ ե տ ու ր"ներ քաշել, ուստի հասնողուած լինենք, որ "փ ե տ ու ր" քաշելու այդ քաղաքականութիւնը նրանց անպատճառ մի օր ճակատաւ ճակատ կկանգնեցնի Հայկական Խնդրի հետ։ Նրանք իրենք կդան, առանց մեր ասելուն էլ, որովհետեւ "փ ե տ ու ր" քաշելու խնդիր կայ, և մանաւանդ հիմայ, որ կապիտալիստական Եւրոպան չի ուզում միայն "փ ե տ ու ր"ը քաշել, այլ ամբողջ թեւն էլ հեռը։

Եւ այժմ՝ երբ այդ շահերով առաջնորդուող պետութիւնների մէջ այնպիսի համախմբումներ են կայանում, որ Արեւելեան Խնդրի տեսակէտով վճռական նշանակութիւն պիտի ունենայ, մեզ կմնայ անդուլ անդադար աշխատել մեր Դատի համար՝ երեւան դնելով նպատակայարմար և իրերի իսկական պահանջին համեմատ յեղափոխական գործունէութիւն, համոզուած լինելով, որ ապագան մերն է և յաղթութիւնը՝ անտարակուսելի։

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵՍԱՆ

ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՒ ԵՎՐԵԳԱՐԾԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

I

Ամէն ապր մի ուրիշ ապրի պատմութիւնից կարող է և պէ՛տք է որ դաս առնի։ Երբ մի ընկերութիւն նոյն իսկ յաջողում է իրեն շարժմանը ուղղութիւն տուող բնական օրէնքի շաւիղը գտնել... նա չի կարող՝ ո՛չ թռիչք գործելով և ոչ էլ հրովարտակներով՝ իր բնական զարգացման փուլերը (փապերը) ջնջել. բայց նա կարող է յղութեան ժամանակամիջոցը կրճատել և նրա երկունքի յաւերը մեղմացնել։

Ճարտարագործութեան (էնդիւստրիայի) տեսակէտից յետամնաց երկիրները իրենց սեպհական ապագայի պատկերը կարող են տեսնել ճարտարագործասէր և՛ս աւելի զարգացած մի երկրի մէջ։

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

Երկար ժամանակ սոցիալիստ պայքարողները աչքից բաց էին թողել զիւղական հասարակութիւնը և իրենց կազմակերպական ու պրոպագանդայի գործը բացառապէս կեդրոնացրել էին քաղաքներում համախմբուած պրոլետարների մէջ։ Իսկ եթէ պատահում էր երբեմն, որ գործիչները մտնում էին զիւղերը, ապա նրանք շատ մեծ յաջողութիւն չէին գտնում, շնորհիւ իրենց պրոպագանդայի այն ձեւին, որ աւելի դիւրամատչելի կարող էր լինել քաղաքացի պրոլետարիատին՝ քան զիւղական աղքատաչքութեանը։

Գործարանի մէջ գործաւորը գտնում էր կուռ բուն միջավայրում, զտակարգային կուռ հոսանքը վճռա առուակի նման հոսում էր նրա առջեւից, և երբը սոցիալիստ պրոպագանդիստը նրանց խօսում էր վարձատրների, յաւերեալ արժէքի, կապիտալիստական հարստութեան կեդրոնացման, բունթոլի, գործարանական կանոնների և աշխատանքի շահագործման... մասին՝ զրանք բոլորը զիւրահասկանալի նիւթեր էին գործարանական աշխատաւորին, որովհետեւ ամէն ինչ իր սեպհական աչքերով տեսնում և ձեռքերով շօշափում էր,—իր առօրեայ կեանքը նրան հասկանալի էին դարձնում այդ նիւթերի մարսողութիւնը։

Գիւղական աղքատաչքութեան համար, մանաւանդ նախակապիտալիստական վայրերում, պրոպագանդայի այդ նիւթերը շատ էլ զիւրահասկանալի չէին կարող լինել. ճարտարագործութեան (էնդիւստրիայի) աստիճանական զարգացման բացատրութիւններից նրանք չէին կարող միանգամից մակաբերել և հասկանալ իրենց սեպհական կեանքը, իրենց միջավայրի մէջ կատարուած և կատարուելիք երեւոյթները, որ աւելի բարդ, աւելի կնճռոտ էին։

Ճաճանչ յարուցում էին զուտ երկրագործական (ագրարային) բնատրութիւն ունեցող խնդիրներ, որոնց մասին, ասվայն, հարկաւոր էր գիտական բացատրութիւններ տալ և շահագրգիռ կողմերին էլ հասկացնել, սոցիալզմի դիրքը նրանց վերաբերմամբ,—ուրեմն անհրաժեշտ էր պրոպագանդայի համապատասխան նիւթեր և փաստեր, յատուկ վիճակագրական տեղեկութիւնների վրայ հիմնուած։

Եւ որովհետեւ անվարժ պրոպագանդիստները գիւղացու իր սեպհական ցաւերի վրայ չէին մատնանիշում և նրան գործունէութեան ծրագիր առաջարկում, ուստի սոցիալիստական ընդհանուր պրոպագանդայի սկզբնական ժամանակներում գիւղացիները սկսեցին կասկածոտութեամբ վերաբերուիլ, և աւելի ա ր մ ա տ ա կ ա ն-ների, քան սոցիալիստների ծրագրին յարիլ։ Իրերի այդ զրութիւնից բուրժուա տնտեսագէտները (Ազատամիտ կամ Մանչէստրեան դպրոցին պատկանողները, ինչպէս և տնտեսագիտութեան Պատմական դպրոցին) աճապարեցին հրճուանքով այն եզրակացութիւնը դուրս բերել՝ թէ սոցիալիստները իրենց մտորիալիստական վարդապետութեամբ չէին կարող մուտք գտնել գիւղական աղքաչաչքութեան մէջ, և, ուրեմն, Մարքսի մատերիալիստական թէօրիան գիւղացիների համար չէր։

Սոցիալիստական շարքերում սկսուեց ինքնաքննութիւնը։

Ամէնքը, բնականաբար, իրենց աչքերը դարձրին դէպի Մեծ Ուսուցիչը, Կարլ Մարքսը և նրա գլուխ գործոցը՝ "Կապիտալը", նորագոյն կեանքի այդ զերազանցօրէն առեւտրանը։

Հողային խնդիրների մասին թէև Մարքսը և Էնգէլսը մի քանի կարևոր մտքեր էին յայտնած, բայց այդ բոլորը եղած էին միջանկեալ նախադատութիւններով և փոքրիկ յօդուածներով։ Իրաւ է, որ "Կապիտալ"ի Դ. հատորի մէջ, "Կալուածահատ"ը (rente foncière) տիրոջի տակ շատ բան էր ասուած, բայց դա դեռ բաւական չէր ներկայացուած նոր հարցերին բաւականութիւն տալու, մանաւանդ որ այդ մասը վերջացած չէր,—Մարքսը մեռաւ՝ առանց իր կեանքի գործը աւարտելու։ Բայց եթէ "Կապիտալ"ի այդ մասը նոյն իսկ զլուխ հանած էլ լիներ՝ դարձեալ, այսօր, փնտռուած պարզաբանութիւնները նրա մէջ կարելի չպիտի լիներ գտնել, որովհետեւ՝ իր առաջադրած յատակագծին համեմատ՝ Մարքսը "Կապիտալ"ի մէջ պիտի խօսէր միայն կապիտալիստական երկրագործութեան մասին։ Մինչդեռ խնդիրները յարուցուած օրերում՝ մտքերը զբաղեցնողը ո՛չ թէ երկրագործութեան կապիտալիստական ձեւերն էին՝ կապիտալիստական մի ընկերութեան մէջ, այլ երկրագործական մանր սեպհականատիրութեան և նախակապիտալիստական ձեւերը։

Եւ ինչ էր տալիս "Կապիտալ"ը,—հետախուզութեան դիալեքտիքական մեթոդ, որով կարելի պիտի լիներ յետնորդներին շարունակել լրացնել իրենց Ուսուցչի բաց թողածը և այդպիսով գիտական նոր նուաճումներ անել։

Սոցիալիստական վարդապետութեան գլխաւոր սկզբունքները՝ Պատմութեան Մատերիալիստական (նիւթապաշտական) Հասկացողութիւն, Դասակարգային Կռիւ, Յաւելեալ-Արժէքի

սեսութիւն՝ սրանք բոլորը նոյնքան ճշմարիտ և վաւերական էին ճարտարագործութեան մէջ, որքան և երկրագործութեան. — ընկերային էվոլիւցիան այդ բոլորը հաստատել էր թանձրացած օրինակներով։

Որ ճարտարագործութեան կապիտալիստական կեդրոնացումը այդ ժամանակները աւելի դիւրին հասկանալի կլինեը, քան հողային կեդրոնացումը, — դա հասկանալի է, որովհետև այդ տեսակները հողային սեպհականատիրութիւնը դեռ ամէն տեղ կապիտալիստական ձևեր չէր ընդունել, և շատ երկրներում էլ հողային դրութեան նախակապիտալիստական սիստեմն էր իշխողը։ Մարքսը երկրագործական խնդիրների վրայ խօսած ժամանակին՝ "Կապիտալ"ի մէջ, աչքի առաջ է ունեցել մի այն Անգլիան, ուր արդէն հողային սեպհականատիրութեան կեդրոնացումը կատարեալ իրողութիւն էր դարձել։ Անգլիական հողերի ամբողջութիւնը թուով շատ սահմանափակ հարուստների սեպհականութիւնն էր եղել։

Ուրիշ հանգամանք էլ ի նկատէ պէտք է ունենալ. "Կապիտալ"ը գրուելիս երկրագործական տեխնիքական (արուեստագիտական) նոր գործիքները դեռ ևս ո՛չ լոյս էին տեսած և ո՛չ էլ կիրառութեան մէջ մտած. երկրագործական նոր գործիքները այն ժամանակները, այսպէս ասած, տակաւին յղացման շրջանի մէջն էին գտնուում, — մինչդեռ երկրագործական տնտեսութեան զարգացման գործը և ուղղութիւնը, մանաւանդ վերջին տասը տարուանը, ամենամեծ չափով կախումն ունին տեխնիքական գործիքներից։

Այդ այն ժամանակներն էր (1859), երբ Ընտրութեան Սկզբունքը տեսակների էվոլիւցիայի (բնաշրջման) մէջ դեռ նոր էր բանաձևուած Դարուինի կողմից. դեռ հազիւ նոր էին սկսել այդ սկզբունքի մի մասը գործնականացնել երկրագործութեան մէջ, այն է՝ կենդանիների ցեղերը աղնուացնել (améliorer) և բոյսերը բազմազանացնել։ Մեքենագիտութիւնը թէև շատ յառաջացած, բայց իր ստեղծագործական արշաւանքը ուղղել էր աւելի դէպի ընդհանուր ճարտարագործութիւնը։ Բաղմաթիւ հսկայ և բարդ մեքենաների շնորհիւ ճարտարագործութիւնը վերանորոգուել, զարգացման արշաւասոյր ընթացք էր առել, բայց տակաւին այդ գիւտերից բաժին չէր դուրս եկած երկրագործութեան համար, այս ճիւղի մէջ դեռ ամէն գործիք հին և նահապետական էր։

Մարքսի հանճարը արդէն նրա մէջն է, որ տնտեսական էվոլիւցիան (բնաշրջումը) նա կապել է արտադրութեան տեխնիքական գործիքների ձևափոխութեան (transformation) հետ։

Արդ, արտադրութեան տեխնիքական գործիքների ձևափոխութիւնը, ճարտարագործութեան մէջ, կատարուել, կիրառութեան մէջ մտել և իր հետևանքները յառաջացրել էր. ստացուել էին իրողութիւններ, որոնք Մարքսիստական դիալեքտիկայի մասունքներն էին կազմում, բայց այդ մինչնոյնպէս դեռ նոյն այդ չափով չէր կատարուել երկրագործութեան մէջ։

Տեխնիքական նոր գործիքները, որ անմիջական պատճառ էին կապիտալիստական տնտեսութեան և էվոլիւցիայի, դեռ անծանօթ էին և գործադրութեան չէին մտած երկրագործութեան մէջ, ուստի այդ նկատմամբ պէտք եղած փորձառական դիտողութիւնները չէին կատարուած բաղմակողմանի կերպով։

Եղած հատ ու կտոր երկրագործական ուսումնասիրութիւնները կատարուած էին տեխնիքական հին գործիքների տուած արդիւնքների վրայ. ուրեմն՝ եթէ սպառման մշակութեան սիստէմի մէջ (système de culture d'épuisement) հողը աղքատանում, ուժասպառ էր լինում, դրա բացատրութիւնը պէտք է որոնել ժամանակի գործիքների մէջ։

Այդ երևոյթն էր հիմունք տուել Մարքսին հաստատելու՝ թէ մինչդեռ ճարտարագործական կապիտալը "շահագործում է մարդկային աշխատանքը", երկրագործական կապիտալը "շահագործում է թէ՛ մարդկային աշխատանքը և թէ՛ հողը"։ Այստեղից այն պարզ եզրակացութիւնն էր գալիս, թէ որքան շա՛տ արտադրիչ (երկրագործական), որքան աշխատանքի մե՛ծ գումար, այնքան էլ հողային աւելի սպառումն, աւելի աղքատացումն։

Մարքսը այդ չէր ասիլ, եթէ աչքի առաջ ունենար, այսօրուայ, երկրագործական տեխնիքական նոր գործիքները և բանաւոր մշակութեան սիստէմը (système de culture rationnelle), որ աւելի մեծ արդիւնք տալով հանդերձ՝ երբէք չի սպառում հողը. որովհետև նա մշակելի հողին վերադարձնում կամ քիմիական պարարտացուցիչ նիւթերով նախապէս տալիս է այն բոլորը, ինչոր նրանից խլում է որպէս արտադրութեան մեծ գումար։

Այնպէս որ, այսօրուայ համար, բացարձակ արժէք չի կարող ունենալ "Կապիտալ"ի այն դիտողութիւնը, որով հաստատում էր թէ մինչդեռ ճարտարագործութեան մէջ կապիտալը "շահագործում էր մարդկային աշխատանքը", երկրագործութեան մէջ "նա շահագործում էր թէ՛ մարդկային աշխատանքը և թէ՛ հողը"։

Այլ պէտք է ասել որ՝ թէ՛ երկրագործական և թէ՛ ճարտարագործական կապիտալները շահագործում են միայն մարդկային աշխատանքը։

Պէտք է նկատել նաև այն, որ երկրագործական տեխնիքական գործիքները և մեքենաները դեռ շատ երկար ժամանակ չէ որ սկսել են կիրառութեան մէջ դրուել, և այն էլ ո՛չ ամէն տեղ և ամէն երկիր։ Ուստի գիտական դիտողութեան առաջ այդ ուղղութեամբ բացուելիք դեռ մեծատարած շատ հորիզոններ կան։

Արդ, ինչպէս էին դասաւորած հարցերը այն ժամանակ, երբ սոցիալիստական պայքարողները սկսեցին գիւղերը մտնել։

—Մարքսիզմը ամէն տեղ սոցիալիստական շարժումների հիմունքն էր կազմում։ Երևայել էր "Կապիտալ"ի Դ. հատորը, որ ինչքան էլ հետաքրքիր և կրթիչ տեղեկութիւններ էր տալիս "Կալուածահաս"ի մասին, բայց դա դեռ բաւական չէր երկրագործական էվոլիւցիայի բոլոր երևոյթները բացատրելու, մանաւանդ այնպիսի երևոյթներ, որոնք, մակերևութային առաջին հայեացքից, անհաշտելի էին թւում Մարքսիստական թէորիայի հետ։

Ընկերային էվոլիւցիայի նկատմամբ Մարքսիստներից շատերի կարծիքն այն էր, թէ ինչպէս որ ճարտարագործական կապիտալի կեդրոնացումը կատարուեց շատ արագ կերպով, նոյնը պիտի լինէր և՛ երկրագործական կապիտալի նկատմամբ. —փոքր ճարտարագործութիւնը շատ երկար ժամանակ չքաշեց կլանուելու համար խոշոր ճարտարագործութիւնից, ինչո՞ւ, ուրեմն, նոյնը չպիտի կատարուէր և՛ փոքր հողատիրութեան վերաբերմամբ։

Մարքի այդ ուղղութիւնից առաջնորդուելով՝ Մարքսիստներից ոմանք այնպէս էին բացատրում, թէ գիւղական աղքատակութիւնը և՛ս շատ շուտով պիտի պրոլետարանար, որովհետև մի կողմից մանր հողատէրերի սեպհականութիւնը հեռանալով բաժան-բաժան պիտի լինէր, ասել է որ հողային ծիւթիւնները երթալով և՛ս աւելի պիտի փոքրանային, ուրեմն անկարող իրենց տէրերին ապրուստի պայմաններ տանելու. մի-ւս կողմից՝ մեծ հողատիրութիւնը այնտեղ էլ իր կլանիչ գործը այնպէս արագ կերպով պիտի կատարէր, ինչոր արդէն կատարուել էր ճարտարագործութեան մէջ. ուրեմն գիւղական հասարակութեան մէջ էլ մի ծայրը պիտի կանգնէր կապիտալիստական խոշոր շահագործման յառաջխաղացումը և տիրապետութիւնը, իսկ միւս ծայրը՝ պրոլետարիատական, հողային սեպհականազրկումը։

Նե այդպէս մտածողները, կրկնում ենք, կարծելով թէ "շահագործում է թէ՛ մարդկային աշխատանքը և թէ՛ հողը"։ Այստեղից այն պարզ եզրակացութիւնն էր գալիս, թէ որքան շա՛տ արտադրիչ (երկրագործական), որքան աշխատանքի մե՛ծ գումար, այնքան էլ հողային աւելի սպառումն, աւելի աղքատացումն։

Մարքսը այդ չէր ասիլ, եթէ աչքի առաջ ունենար, այսօրուայ, երկրագործական տեխնիքական նոր գործիքները և բանաւոր մշակութեան սիստէմը (système de culture rationnelle), որ աւելի մեծ արդիւնք տալով հանդերձ՝ երբէք չի սպառում հողը. որովհետև նա մշակելի հողին վերադարձնում կամ քիմիական պարարտացուցիչ նիւթերով նախապէս տալիս է այն բոլորը, ինչոր նրանից խլում է որպէս արտադրութեան մեծ գումար։

Այնպէս որ, այսօրուայ համար, բացարձակ արժէք չի կարող ունենալ "Կապիտալ"ի այն դիտողութիւնը, որով հաստատում էր թէ մինչդեռ ճարտարագործութեան մէջ կապիտալը "շահագործում էր մարդկային աշխատանքը", երկրագործութեան մէջ "նա շահագործում էր թէ՛ մարդկային աշխատանքը և թէ՛ հողը"։

Այլ պէտք է ասել որ՝ թէ՛ երկրագործական և թէ՛ ճարտարագործական կապիտալները շահագործում են միայն մարդկային աշխատանքը։

Պէտք է նկատել նաև այն, որ երկրագործական տեխնիքական գործիքները և մեքենաները դեռ շատ երկար ժամանակ չէ որ սկսել են կիրառութեան մէջ դրուել, և այն էլ ո՛չ ամէն տեղ և ամէն երկիր։ Ուստի գիտական դիտողութեան առաջ այդ ուղղութեամբ բացուելիք դեռ մեծատարած շատ հորիզոններ կան։

Արդ, ինչպէս էին դասաւորած հարցերը այն ժամանակ, երբ սոցիալիստական պայքարողները սկսեցին գիւղերը մտնել։

—Մարքսիզմը ամէն տեղ սոցիալիստական շարժումների հիմունքն էր կազմում։ Երևայել էր "Կապիտալ"ի Դ. հատորը, որ ինչքան էլ հետաքրքիր և կրթիչ տեղեկութիւններ էր տալիս "Կալուածահաս"ի մասին, բայց դա դեռ բաւական չէր երկրագործական էվոլիւցիայի բոլոր երևոյթները բացատրելու, մանաւանդ այնպիսի երևոյթներ, որոնք, մակերևութային առաջին հայեացքից, անհաշտելի էին թւում Մարքսիստական թէորիայի հետ։

Ընկերային էվոլիւցիայի նկատմամբ Մարքսիստներից շատերի կարծիքն այն էր, թէ ինչպէս որ ճարտարագործական կապիտալի կեդրոնացումը կատարուեց շատ արագ կերպով, նոյնը պիտի լինէր և՛ երկրագործական կապիտալի նկատմամբ. —փոքր ճարտարագործութիւնը շատ երկար ժամանակ չքաշեց կլանուելու համար խոշոր ճարտարագործութիւնից, ինչո՞ւ, ուրեմն, նոյնը չպիտի կատարուէր և՛ փոքր հողատիրութեան վերաբերմամբ։

Մարքի այդ ուղղութիւնից առաջնորդուելով՝ Մարքսիստներից ոմանք այնպէս էին բացատրում, թէ գիւղական աղքատակութիւնը և՛ս շատ շուտով պիտի պրոլետարանար, որովհետև մի կողմից մանր հողատէրերի սեպհականութիւնը հեռանալով բաժան-բաժան պիտի լինէր, ասել է որ հողային ծիւթիւնները երթալով և՛ս աւելի պիտի փոքրանային, ուրեմն անկարող իրենց տէրերին ապրուստի պայմաններ տանելու. մի-ւս կողմից՝ մեծ հողատիրութիւնը այնտեղ էլ իր կլանիչ գործը այնպէս արագ կերպով պիտի կատարէր, ինչոր արդէն կատարուել էր ճարտարագործութեան մէջ. ուրեմն գիւղական հասարակութեան մէջ էլ մի ծայրը պիտի կանգնէր կապիտալիստական խոշոր շահագործման յառաջխաղացումը և տիրապետութիւնը, իսկ միւս ծայրը՝ պրոլետարիատական, հողային սեպհականազրկումը։

Նե այդպէս մտածողները, կրկնում ենք, կարծելով թէ

երկրագործական կապիտալիզմի ճնշման պատճառով շուտով մանր սեպհականատիրությունը հողեվարքային վիճակ պիտի ստանար, ուստի՝ Սոցիալիստական Սկզբունքի տեսակետից՝ նրանք չէին ուզում մանել գիւղը և գիւղացիների հետ գործ ունենալ. այլ նրանք՝ առ առաւելն՝ ուզում էին գիւղացիներին շահագրգռել բացառապէս քաղաքական խնդիրներով և միայն կազմակերպել երկրագործական պրոլետարիան՝ եթէ գոյութիւն ունէր։ Գիւղական փոքր սեպհականատէրը անպայման կերպով պիտի մեռնէր, չքանար, տեղի տար մեծ հողատիրութեան, ասում էին նրանք, ուրեմն ո՛չ միայն պէտք էր թոյլ տալ, այլ նպաստել լ՛սկ որ նա չքանար, ու երկրագործական պրոլետարիատը, իր պահեստի բանակներով դար յառաջ և տուաբանար, ինչպէս որ էր արդէն ճարտարագործութեան մէջ, ու այդպիսով ներկայ ընկերութեան երկու երեսն էլ հաւասար ուժգնութեամբ փայլէին թէ՛ քաղաքներում՝ գործարանների մէջ, և թէ՛ գիւղերում՝ դաշտերի մէջ, իսկ մինչ այդ՝ հեռո՛ւ գիւղից և գիւղական հասարակութիւնից։

Միջանկեալ կերպով ասենք որ մանր հողատիրութեան արագ չքացման թեորիան պաշտպանում էին և՛ բուրժուա անտեսագէտները։

Սակայն շատ երկրներում, վերջերը եղած վիճակագրական տեղեկութիւնները դալիս էին հաստատելու, որ գիւղական մանր սեպհականատիրությունը ո՛չ միայն չէր չքանում, կարծուածին չափ արագ, այլ նա նոյն իսկ յամառ ընդդիմադրութիւն էր ցոյց տալիս։—Այս վերջին իրողությունը շատերին այն եզրակացութեան հասցրեց, որ Մարքսիստական ընկերային էվոլիւցիան ընդհանուր օրէնք չէր և, հետևաբար, երկրագործութեան մէջ ապագան ուելի գիւղական շահագործմանն էր պատկանում, քան կապիտալիստական։ Եւ այդ կարծիքին յարողները այնքան յառաջ էին գնում, իրենց դրածների մէջ, որ սկսեցին բայէ ի բաց սոցիալիզմի անանկությունը յայտնել՝ որպէս գիտութիւն։

Այդ երկու կարծիքներից ո՞րն էր ուղիղը. արդեօք եղա՞ծ էին անհրաժեշտ համարուող հետախուզութիւնները երկրագործական աշխարհի մէջ։ Սոցիալիզմի տեսակէտից՝ տրնտեսական էվոլիւցիայի առանցքը արտադրութեան գործիքներն էին, —այդ ուղղութեամբ եղա՞ծ էին անհրաժեշտ հետախուզութիւնները և լուսաբանութիւնները, հաւաքուա՞ծ էին իրողությունները և Մարքսիստական վերլուծութեան ենթարկուա՞ծ, —ոչ։ Ուստի սկսուեց եռանդուն հետախուզութիւնը, անվերապահ ինքնաքննութիւնը։

Եւ ի՞նչ արդիւնք տուեցին այդ բոլորը։

Ահա՛ թէ ինչ՝ համառօտիւ։

Ա — Այդ երկու կարծիքներից և ո՛չ մէկը բացարձակապէս ճշմարիտ էր։ Կաուցկու, Վանդերվելդի և Դեսարէի, Գատտիի, Մորելի . . . իրարուց անկախ արած հետախուզութիւնները այն եզրակացութեանը բերեցին, թէ երկրագործութեան մէջ չէր, որ վերջ պիտի դնէր խոշոր կամ փոքր շահագործութիւնը։ Զանազան երկրներից (Բելգիա, Ֆրանսիա, Գերմանիա . . .) առնուած վիճակագրական տեղեկութիւնները ցոյց էին տալիս որ եթէ երկրագործութեան մի բեւեռը տանում էր դէպի ընդհանուր պրոլետարիզացիան, միւս բևեռը ներկայացնում էր յարատև մի ճօճումն (oscillation) մեծ և փոքր շահագործութեան միջև։ Ուրեմն ո՛չ միայն սեպհականատիրութեան կապիտալիստական կեդրոնացումը շատ դանդաղ էր առաջ գնում, այլ երկրներ կային՝ ուր մանր սեպհականատիրությունը աճում էր. երկիրներ էլ, ընդհակառակը, ուր նուազում էր, բայց և այնպէս փոքր սեպհականատիրությունը յամառ ընդդիմադրութիւն էր ցոյց տալիս։

Բ.—Երկրագործությունը ինքնին մինակ չէր արտադրում այն բոլոր տարրերը, որոնք անհրաժեշտ էին սոցիալիզմին հասնելու համար։

Դ. — Թէ կապիտալիստական և թէ գիւղական երկրագործությունը, ա ն կ ա խ ճ ա ր տ ա ր ա գ ո ր ծ ո ւ թ ի ւ ն ի ց, հետզհետէ դադարում էին շեշտուած դեր խաղալուց ընկերության մէջ, այնպէս որ երկրագործությունը աստիճանաբար նուաճւում էր ճարտարագործությունից և երկրագործական էվոլիւցիայի օրէնքը գծողը ճարտարագործությունն էր դառնում։

Դ. — Թէ ընկերային և թէ երկրագործական էվոլիւցիայի մ ի տ ո ւ մ ն ե ր ը բոլոր քաղաքակիրթ երկրների մէջ ի սկապէս միևնոյնն էին, բայց այդ միտումների ստեղծած դրությունը՝ զանազան երկրներում՝ իրարուց մեծապէս տարբեր էին, և նոյն իսկ միևնոյն երկրի մէջ տարբեր դրություններ կային, նայելով աշխարհագրական դիրքին, կլիմայի յատկությանը, հողի կազմությանը, պատմական անցեալին և, հետևաբար, ընկերային տարբեր դասակարգերի ոյժին ու կարողությանը։

Ե. — Երկրագործությունը հետզհետէ ճարտարագործւում էր (s'industrialiser)։

Եւ այդ բոլորը գտնում էին այն իրականության մէջ, որի պատկերը ա՛յնքան ճեռնհասությամբ նկարագրել էր Կաուցկին, — այսինքն.

Ներկայ քաղաքակիրթ ասուած ընկերության մէջ թէև տիրապետողը կապիտալիստական արտադրության ձևն է, թէև մեր ժամանակաշրջանը յուզողը և նրան որոշեալ կերպարանք տուողը կապիտալիստ և վարձու պրոլետարների միջև եղած հակամարտությունն է, բայց աչքի առաջ պիտի ունենալ միաժամանակ և՛ այն հանգամանքը, որ կապիտալիստ արտադրության եղանակը արտադրության մ է ն մ ն ի ա կ ձևը չէ ներկայ ընկերության մէջ։ Իրողությունն այն է, որ արտադրության կապիտալիստ եղանակին առընթեր, —նամանաւանդ ճարտարագործապէս ոչ-շատ զարգացած և երկրագործական նկատուած երկրներում —հանդիպում են նախակապիտալիստական արտադրության եղանակի շատ մնայորդներ, որոնք տակաւին իրենց գոյությունը պահում են. օրինակ, շատ երկրներում դեռ կան պետական և համայնական սեփականության բազմաթիւ ձևեր։ Հետևաբար՝ մեր ժամանակի ընկերային կեանքի հակամարտությունը կապիտալիստի և վարձակալով աշխատող պրոլետարիատի միջև եղած հակամարտությունը չէ միայն։ Այդ երկու դասակարգերի կողքին և նրանց միջև կան մ ի ջ ի ն դասակարգեր էլ։ Ընկերությունը չունի արմատապէս բիւրեղացած երկու ծայրագոյն կատարներ՝ մին լեռնագագաթ, իսկ միւսը՝ ծանծաղուտ, մին միապետականներ՝ իրենց պալատականներով և բարոնների, միւսը՝ զանազան կարգի մուրացկան պրոլետարներով (lоum-penproletariat), այլ այդ երկուսի մէջ կան մի տեսակ հանդոյց դասակարգեր, որոնք բեկորներ, մնայորդներ, արտադրություններ են նախակապիտալիստական ընկերային ձևերի։

Արդ, այդ միջին դասակարգերը՝ ոմանք բարձրացող, ոմանք ընկնող, իրարու դէմ առ դէմ կանգնած՝ ծայրայեղօրէն տարբեր շահերով՝ մշտապէս փոփոխուող բնաւորությամբ, իրարու աղոցում, իրարու դալարում են՝ մի կողմից կապիտալիստների շահերի և միւս կողմից պրոլետարների միջև, առանց ամբողջապէս մեկին կամ միւսին յարել, կպչել կարողանալու. ահա՛ այդ դասակարգերն են, որ մեր ժամանակի քաղաքական և նոյն իսկ տնտեսական կռիւներին տալիս են անտարբերության բնաւորություն և իրենց մարտական նշանաբաններով երբեմն կուսի նժարը այս, երբեմն այն կողմն են թեքել տալիս, և վերջապէս սրանք են, որ ա ր մ ա տ ա կ ա ն ն ե ր ի ընտրող տարրը և զօրաբանակն են կազմում։

Պարզ է, որ այն թէօրետիկոսները, որոնք ցանկութիւն ունեն ժամանակակից ընկերային կեանքի ղեկավարող օրէնքները հետախուզել և գտնել, նրանք՝ ներկայացած այդ բազմաղան երևոյթների միջից՝ պիտի կղզիացնեն, պիտի վեր առնեն մի կողմից կապիտալիստ արտադրութեան եղանակը իր էութեան և դասական ձևերի մէջ, անջատելով այն արտադրութեան նախակապիտալիստական ձևերից, և միւս կողմից էլ՝ պրոլետարիատ դասակարգը։

Բայց գործնական կեանքի մէջ այդպէս չի կարելի անել. գործնական քաղաքագէտը, ուրեմն և կենդանի դրծի մի կուսակցութիւն, նրա բերանը և գործիքը հանդիսացող մարմնոյը մի անձ ամենամեծ սխալը գործած կլիներ, եթէ ներկայ ընկերութեան միակ ազդակները նկատէր բացառապէս կապիտալիստները և պրոլետարները, ու աչքը դարձներ միւս՝ միջին դասակարգերից, մանաւանդ հողային մանր սեպհականատէրերից ընդհանրապէս և գիւղական ազգաբնակչութիւնից մանաւորապէս, նամանաւանդ երկրագործական հիմունք ունեցող երկրներում, ինչպիսին է Ռուսաստան, Ֆրանսիա, Հունգարիա, Իտալիա, Իսպանիա, Հայաստան։

Իրաւ է Մարքսը "Կապիտալ"ի մէջ խօսում է միշտ կապիտալիստների և պրոլետարների մասին. բայց "18 ԲՐԻՒՄԵՐ, ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱԿԱ-ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԴԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ" իր երկերի մէջ՝ կապիտալիստների և պրոլետարների կողքին՝ նա տեղ է տուել միապետներին, ցնցոտիներ հագնող գիւղացիներին, փոքր բուրժուաներին, բիւրոկրատներին, պինուորներին, ուսուցչապետներին, յեղային և պատմական անցեալի խնդիրներին, և այլն։

Երկրագործական պրոլետարիատը համապատկեր ընկերն է քաղաքացի պրոլետարիատի, բայց անկին կայ գիւղական մանր սեպհականատէրը, փոքր հողատերը, որ շատ պետութեանց մէջ գերակշիռ թիւ ունի և դէմոկրատական կուսակցութիւնների պայքարող տարրերն է կազմում։ Պէտք է ընդմիշտ թողնել դրանց։

Իրողութիւնն այն է, որ Սոցիալ-Դէմոկրատիան սկզբում բնաւ հոգատարութիւն չունեցաւ գիւղացիների մասին։ Ճշմարտութիւն է և՛ այն, որ Սոցիալ-Դէմոկրատիան բարեգործ մի կուսակցութիւն չէր, որ իրարու հակաշահ բոլոր դասակարգերին հաւասարապէս աշխատէր բաւականութիւն տալ այդպիսի մի տիտղոս ստանձնէր բուրժուազական դէմոկրատական-արմատական մի կուսակցութիւն, բայց Սոցիալ-Դէմոկրատիան այդ չէր կարող անել հենց այն պատճառով՝ որ նա դասակարգային կռուի մի կուսակցութիւն էր։ Ուստի շատ զարմանալի էլ չէ, որ նրա հոգածութեան առաջին և մեծ առարկան եղաւ քաղաքների մէջ կեդրոնացած պրոլետարիատը։ Սոցիալ-Դէմոկրատիայի մի քանի թէօրետիկոսները այն յոյսն ունէին, թէ տնտեսական էվոլիւցիան ինքնին իր ճանապարհը պիտի հարթէր դէպի գիւղը, ինչպէս որ նոյնը ասել էր քաղաքների վերաբերմամբ, հետևաբար փոքր և մեծ շահագործման միջև եղած կռիւը պիտի վերջանար առաջինի ջնջումով, և այն ատեն շատ դիւրին պիտի լիներ երկրագործական ազգաբնակչութեան մասսան շահել, ինչպէս զուտ պրոլետարական մի կուսակցութիւն։

Սոցիալ-Դէմոկրատիայի անփորձ մարտիկները սկսեցին մտնել գիւղերը. բայց իրենց շփման առաջին կէտում, նրանք բաղխեցին "խորհրդաւոր այն զօրութեան հետ, որ դէմոկրատական յեղափոխական շատ կուսակցութիւնների համար անակնկալներ էր պատրաստել"։ Նրանք տեսան, որ փոքր շահագործութիւնը երկրագործութեան մէջ երբէք չի մտնում արագ չքացման պրոցեսի մէջ, իսկ մեծ շահագործումները շատ յամբ կերպով են հողշահում, յառաջ գնում, և նոյն իսկ տեղ տեղ էլ կորցնում՝ փոքր շահագործման առաջ տեղի տալով։

Ուրեմն ի՞նչ պէտք էր անել, փո՞քր, թէ՞ մեծ սեպհականատիրութեան կողմը պէտք էր բռնել։ Եւ այս խնդիրը երկար ժամանակ խուզարկու մտքերը զբաղեցրեց, ոմանք առաւելութիւն տուեցին մեծ հողատիրութեան, ոմանք՝ փոքր։ Բայց այդպէս մտածողները բոլորն էլ այն սխալն էին գործում, որ երկրագործութիւնը ճարտարագործութիւնից բոլորովին անկախ էին նկատում։

Նրանք անգիտանում էին և՛ այն թէ՝ ինչպէս որ փաստել է Կաուցկին՝ երկրագործութիւնը չի զարգանում նոյն այն պրոցեսով՝ ինչպէս ճարտարագործութիւնը. որ նա ունի իր սեպհական օրէնքները։ Բայց դա ցոյց չի տալիս, որ ճարտարագործութեան էվոլիւցիան երկրագործական էվոլիւցիային հակառակ է և նրա հետ անհաշտելի։ Ընդհակառակը՝ նրանք երկուսն էլ դէպի միևնոյն նպատակն են ձգտում՝ անխախտ, բաւական է որ մին միւսից չկղզիացնուի և երկուսն էլ միևնոյն ամբողջական պրոցեսսուի ազդակները նկատուելով՝ այնպէս ուսումնասիրուի։

Ուստի, երկրագործութեան մէջ սխալ կլիներ Մարքսիստական թէօրիան սահմանափակել այն սովորական բանաձևի մէջ թէ "փոքր սեպհականատիրութիւնը պիտի չքանայ և անպատճառ կլանուի մեծ սեպհականատիրութիւնից"։ Մարքսիստական մեթոդով երկրագործութիւնը ուսումնասիրողը չպէտք է առաջարկէր այն հարցը, թէ փոքր սեպհականատիրութիւնը երկրագործութեան մէջ ապագայ ունէր կամ ոչ. այլ ընդհակառակը, պէտք է ջանար հետախուզել, քննել այն ձևափոխութիւնները որ կրում է երկրագործութիւնը կապիտալիստ արտադրութեան բէժիմի ընթացքում։

"Պէտք է որոնել՝ եթէ եւ ինչպէս կապիտալը նուաճում է երկրագործութիւնը, յեղաշրջում է այն, խարխլում է (շարժում է) արտադրութեան եւ սեպհականատիրութեան հին ձեւերը և անհրաժեշտութիւն է ստեղծում նոր ձեւերի համար"։

Խնդիրները այս ուղղութեամբ ուսումնասիրելով է — ինչպէս որ ասել է Կաուցկին, — որ կարելի է իմանալ թէ արդեօք Մարքսի թէօրիան ճի՞շդ է և՛ երկրագործութեան վերաբերմամբ, ու թէ արդեօք արտադրութեան միջոցների մասնաւոր սեպհականութիւնը պէ՞տք է որ կանգ առնի արտադրութեան բոլոր միջոցներից ամենանշանաւորի՝ հողի առաջ։

Եզրակացութիւն։ — Երկրագործական տեսակէտից կան երկիրներ, ուր հողային սեպհականատիրութեան նախակապիտալիստական դրութիւնը տիրապետող է, օրինակ, Ռուսիա, Իսպանիա, Պորտուգալիա, Իտալիա, Հայաստան... և ուր նոր-ազգոյն ճարտարագործութիւնը դեռ ամէն ճիւղերի մէջ իշխող չէ։

Կան երկիրներ՝ ուր հաւասարապէս տիրապետող է թէ՛ ընդհանուր ճարտարագործութիւնը և թէ՛ երկրագործական կապիտալիստական ձևը, օրինակ՝ Անգղիա, Ամերիկայի Միացեալ-Նահանգներ, մասամբ և Գերմանիա։

Կան երկիրներ էլ, ուր թէև ընդհանուր ճարտարագործութիւնը զարգացած է, բայց երկրագործական կապիտալիստական ձևի կողքին գոյութիւն ունի մեծ չափով և՛ մանր հողատիրութիւնը, որ խոր արմատներ ունի և ազգաբնակչութեան մի խոշոր մասի զբաղումն է, օրինակ՝ Ֆրանսիա։

Եւ յետոյ, ամէն տեղ՝ հողային մանր սեպհականատիրութիւնը յամառ ընդդիմադրութիւն է ցոյց տալիս, և ոչ միայն շատ տեղերում արագ չի չքանում, այլ ձգտում է աւելի մատալուն դառնալ։

Արդ, այս պայմանների ներքոյ, Սոցիալ-Դէմոկրատիան պէ՞տք է և կարո՞ղ է ունենալ իր երկրագործական (ագրարային) ծրագիրը, որով կարելի լիներ գիւղական հասարակութեան մէջ մտնել, առանց շեղուելու Սոցիալիզմից և Մարքսիստական թէօրիայից։

Ս. Ս.-Դ.

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻԶԻՑ

Ցարի վանդալամիտ կառավարութիւնը՝ հպարտացած նրանով, որ Երկրորդ Դուման էլ կարողացաւ անպատիժ կերպով ցրուել. շունչ առած նրանից, որ դամոկլեան յեղափոխական սուրը փոքր ինչ յետ գնաց—ի հարկէ ապաղային աւելի մեծ թափով ցարական գլխին մէջ խրուելու—այսօր՝ կատաղած ընտանեկան մի անասունի նման, աջ ու ձախ՝ իր ձեռքը ընկնողին ուղղակի փարատում է։ Ամբողջ Ռուսաստանը դարձել է սպանդանոց, բանտ և աքսորավայր...

Իսկ մեր գեներալ նահանգապետից մի՛ հարցրէ՛ք, այս "իսկական ռուս մարդը„ Պարսից սատրապներից էլ անցաւ։ Բռնապետական բէժիմը մարմնացնող այս ճիւաղը ուղղակի ուզում է կանգնեցնել կեանքի հոսանքը, բաւական չէ որ ամենաչնչին պատրուակներով կործանեց մամուլը, արդեօք դրեց ամէն խօսող բերանի, նա Թիֆլիսը դարձրեց անապատ՝ ուր մարդկային կեանքը ոչինչ արժէք չունի, եթէ նա ցարի համար չէ։ Խուզարկութիւններին, բանտարկութիւններին էլ չափ ու սահման չկայ։ Օրը ցերեկով՝ երբ խաղաղ մարդիկ իրենց գործին են գնում, յանկարծ շրջապատւում են կօզակների ջոկատներից. լսւում է "ձեռքերդ վե՛ր„ գոռոցը։ տեղդ անշարժ պիտի կանգնես և թոյլ տաս խուզարկուել։ Վա՛յ քեզ, եթէ մօտդ զենակի կտոր և կամ կասկածելի մի բան գտնուի,—տեղդ Մետեխի բանտը պիտի լինի, եթէ բարեբաղդութիւնն ունես տեղն ու տեղը չգնդակահարուելու։ Իսկ եթէ աչքից հեռու տեղերում, խուզարկութեան պատրուակով, պաշտօնական ի՛նչ թալանչիութիւններ են կատարւում,—սա արդէն թալանող պաշտօնեաները գիտեն։

Այս օրերս այստեղ խիստ ձերբակալութիւններ են լինում, բանտարկուած են շատ անմեղներ, և նոյնիսկ 12 տարեկան մի երեխայ։

Դանձակից առնուած լուրերից երևում է, որ տեղական կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է Թաթարներին դրգռել Հայերի դէմ, դրդելով նրանց, որ յարձակուեն Հայերի վրայ կոտորեն, թալանեն, նախապէս հմտորուած լինելով որ անպատիժ կը մնան։ Մինչև յարդ Թաթարները դեռ չեն շարժուել։ Տեսնենք։

Կառավարութիւնը ինքը Դանձակի հայկական մասը կողոպտելի և թալանի է ենթարկել տուել՝ մի քանի հայ կիներ և երեխաներ սպանել տալու ատիճան։ Ժողովրդից շատերը գաղթում են։ Այս բոլորի պատրուակը այն է, որ տեղացի մի Հարուստ գերմանացու սպանողներին հետապնդող կօզակները յարձակուել և սպանել են ուզել անմեղ Հայերի, իսկ նրանք պատասխանել և սպանել են մի կօզակ։

Ո՞ր բռնապետութիւնը մինչև վերջ յաղթող է եղել,—եթէ այդ հարցին պատասխանուի պատմական փաստերով, ապա կը տեսնուի, որ գիշյոտինը ի զուր ստեղծուած չի եղել բռնապետների և նրանց նեցուկների համար։

ԱՐԱՄԱԶԴԻ ԴՐՈՂԸ

31 Օգոստոս, 1907
ԹԻՖԼԻԶ

ՆԱՄԱԿ ՍՈԽՈՒՄԻՑ

Նախկին նամակով մի քանի տեղեկութիւններ էի տուած Հայ ժողովրդի արտագաղթի մասին Հայաստանից։ Շարունակում եմ. 1907-ի Յունվարից մինչև նամակիս գրութեան օրը՝ Սև Ծովի ափերից Սոխումի շրջանն են գաղթել 2697 հոգի Հայ, 2-70 տարեկան։

Գաղթողների բոլորն էլ վերջին աստիճանի աղքատ են, նրանք պատմում են թէ ինչպէս տաճիկ կառավարութեան հարկահանութիւնից վերջին ծայր թշուառութեան հասած ժողովուրդը չունի ոչ մի յոյս պատուի և կեանքի ապահովութիւն, այլև ուտելու մի կտոր հաց իսկ, և դրա համար ժողովուրդը զրուխը առնում փախչում է։ Գաղթականներն ասում են, որ մի քանի տեղերում, թէև աղքատ, բայց նրանք էլ ստիպուած են եղել գաղթել, թողնելով նոյն իսկ իրենց ինչքը և ունեցած տաւարները, որովհետև իրենք ամէն րոպէ գտնուելիս են եղել մահուան անխուսափելի վտանգի առաջ։

Եւ սրանք գալիս են Ռուսաստան "աղատ օդ շնչելու„, բայց խեղճերը չգիտեն թէ ռուսական բռնութիւնները տաճիկներից պակաս չեն։

Մի քանի խօսք էլ մեր շրջանի մասին.—1895 թուականից Սոխումի շրջանը գաղթող Հայերն են, որ այս կողմերի լեռներն ու ձորերը ծաղկեցրել են։ Դժբախտաբար այդ ժողովուրդը շրջապատուած լինելով կիսավայրենի Աբխազներով, ծանրածանր տուժում է, որովհետև Աբխազները գողութիւնը և աւազակութիւնը իրենց արհեստն են դարձրել։

Հայերը որ մի փոքր ապահով դիրք էին ստեղծել, բաւականին կորցրին Աբխազների անսանձելի յարձակումներից և յափշտակութիւններից։

Հայ ժողովուրդը կառավարութեան վիճակ, փաստերով թէ ինչպէս մինչև 1905 թուականին Աբխազները Հայերից գողացել են 300 գլուխ չորքոտանիներ — ձի, մատակ, կով, եզ, ուայլն։ Կառավարութիւնը խոստացաւ Հայերի այդ ինսը 1905-ին հատուցանել, այժմ թէև 1907-ի մէջն ենք՝ կառավարութիւնը այդ մասին չի էլ մտածում, ահա ի՛նչ նրմուշի կառավարութեան մէջ է փնտռում տաճկահայ ժողովուրդը իր հանդստութիւնը։

ԿՈՐԻՒՆ

6 Օգոստոս 1907
ՍՈԽՈՒՄ

ՆԱՄԱԿ ԵԱԼԹԱՅԻՑ

Արդէն մի տարի լրացաւ այն օրից, երբ Ղրիմը Ռուսաստանի ուրիշ շրջանների հետ, Առաջին պետական Դումայի ցրումից յետոյ, յայտարարուեց պատերազմական և այլ կարգի պաշտպանողական բացառիկ դրութեանց մէջ։ Ներկայումս մենք մտնում ենք այդ անտանելի իրականութեան երկրորդ տարեշրջանը, և բացառիկ ճնշող դրութիւնները այսօր մնում են նոյնը՝ որպէս Ղրիմում, նոյնպէս և համարեա թէ ամբողջ Ռուսաստանում։ Ցանկարձակիի եկած, շշմած կառավարութիւնը իր նախկին "հմայքն„ ու "ազդեցութիւնը„ վերականգնելու միակ "փրկարար„ միջոցները որոնեց և որոնում է մասսայական խուզարկութիւնների և անվերջ ու անհամար աքսորումների մէջ։ — Խղճալի արամաբանութիւն։

Մտնաւորելով մեր խօսքը՝ յատկապէս Եալթայի վերաբերմամբ, պէտք է ասել որ մի տարի առաջ, երբ գեներալ-նահանգապետը քաղաքը իր գաւառով յայտարարում էր պատերազմական դրութեան մէջ, իր արձակած հրամանի մէջ խոստանում էր "աւազակների„ բոյն (այսինքն՝ յեղափոխականների) դարձած քաղաքը փոխել նախկին կուրորտի (բուժարանի), բարձրացնելով վերջինիս վրայ "կարմիր խաչի„ դրօշը և ապահովելով նրա մէջ ապաստան գտնող հազարաւոր հիւանդոտ և բժշկուելու եկած հիւրերի կեանքն ու հանդիստը։

Բայց իբրև բիւրօկրատ, իր պատկանած դասակարգին առանձնայատուկ նենգութեամբ, քիչ յետոյ իր գնդով ձեռք ձեռքի տուած ստիկանապետի և սրա "խլզաս„ ստիկանութեան հետ՝ մատ. "ճշմարիտ ռուսների„ սև-հարիւրակային խմբակի դեներով ներս և ամբողջ 8-9 ամիսներ իր խստութիւններով կուրորտաբնակների հանգիստը վրդովելուց յետոյ՝ վերջը "Ռուս ժող. Դաշնակցութեան„ "եռագոյն փարատը„ փառաւորապէս օծել տուեց քաղաքի մայր եկեղեցում։

Այն օրուանից երբ գեներալ նահանգապետը՝ Դումբաձէն՝ յարեց "իսկական ռուսների„ սև բանակին, վերջինները իրա դարշելի արարքները իրանց սահմաններից էլ այն կող-

մը անցան։ Սրանք գաղտնի միջոցներով յարաբերութեան մէջ մտնելով հասարակական աւելի լայն խաւերի հետ իրենց մատնութիւններով, անտեղի զրպարտութիւններով հարիւրներով մարդիկ կալանաւորել տուին և աքսորեցին։ Այդ "խակական ռուսների„ յանդգնութիւնը և դարշելութիւնը այն չափերին հասաւ, որ սկսեցին քաղաքային փոստով, դրաւոր առաջարկութիւններ անել սանտէրերին, մագազին, հիւրանոց և կամ առևտրական տներ ունեցողներին, որպէսզի վերջինները հաճաձայնէին իրենց շարքերը մտնելու, ընդդիմադրութեան դէպքում սպառնում էին քաղաքից աքսորել տալ։ Եւ այդ բոլորը շնորհիւ այն բանի, որ նրանք վայելում էին "ընկեր„ Դումբաձէի—դեներալ Նահանգապետի—և "ընկեր„ ոստիկանապետ Գէլոզրեվիչի կատարեալ հովանաւորութիւնը։ Եւ եղան բաւականին դէպքեր, երբ մարդիկ դրուած անելանելի պայմանների մէջ, ստիպուած կորցնելու իրենց տնտեսութիւնը՝ ակամայ, առերես ենթարկւում, ընդունում էին այդ ստոր առաջարկութիւնները։—Ցաւանք յանուանէ մի քանի նման դէպքեր ունիմ դիտած։

Ներկայումս տեղի ունեցող խուզարկութիւնների մեծագոյն մասը կատարւում է "խակական ռուսների„ խմբակի ցուցմունքների համաձայն և մինչև. իսկ ստացա առաջնորդութեամբ։ Բաւական է, օրինակ, որ խօսակցութեանդ ժամանակ լաւ չգիտնալով դիմացինիդ ներքինը, անզգուշութեամբ բերնից բաց թողիր մի քանի քննադատական բառեր ներկայ քաղաքական դրութեան մասին Ռուսաստանում, և հաւատացած եղէք, որ դուք առանց երկբայութեան ընկած էք ծուղակը, որից խոյս տալու էլ ոչ մի փրկութիւն չը կայ։—գիշերը ձեր բնակարանը ենթարկուելու է խուզարկութեան և դուք եթէ նոյն իսկ ձեր "տեղակացութիւնը„ ապացուցող փաստեր չը գտնուեն, արժանանալու էք կապիտ յանպիսմանութեան և այնուհետև գտնուելու էք առանձին հսկողութեան տակ։

Մի կողմ թողնելով այն հարիւրաւոր դէպքերը, որոնք ամենայն օր կրկնւում են մեզ հետ ապրող ռուս, հրէայ, լեհ, կարայիմ և այլն ժողովուրդների կեանքում, մասնաւորապէս հայ փոքրիկ գաղութը ևս բնականօրէն ենթակայ է նոյն պատահարներին—խուզարկութիւններին ու հալածանքներին։ Արդուինցի եղբարք Բաշարատեանների, Գ. Գաբօեանի տները մի քանի անգամ ենթարկուած են եղել անմիտ խուզարկութիւնների։ Յովհաննէս Խաչեխանի խանութը խուզարկելուց յետոյ, գէշերուայ ժամը 1-ին նրա տունն են գնում և այնտեղ ևս ոչինչ չը գտնելով դատարկաձեռն յետ են դառնում, իրենց հետ առնելով Երկրից՝ Ամասիայից եկած կարմիր մեղանով գրուած նամակները, ենթադրելով, որ դոքա յեղափոխական բովանդակութիւն կրող գրութիւններ են։ Նոյն վիճակին ենթարկուած է Կ. Պետրոսեանը։ Մի ոմն Աբգարի տունից, խուզարկութեան ժամանակ, սեղանի վրայից գտնուում են վերջինիս կնոջ ոսկեայ մատանիները, ապարանջանները. ամուսնու արծաթեայ ծխախոտի տուփը, նախապէս տանտիրոջը մահմեդական սենեակից դուրս ճամբելով։ Դործը յանձնուած է դատին։ Տեսնենք ինչով կը վերջանայ։

Ահա այսպէս է իրերի վիճակը առայժմ մեզանում։ Ընդհանրապէս մթնոլորտը շատ ճնշող է՝ ինչպէս այստեղ, այնպէս և ուրիշ կողմեր, ինչպէս այդ կարդանում ենք հետևյընել ընթացիկ մամուլի էջերից։ Բայց այդ ընդհանուր ճնշող մթնոլորտի մէջ հաղուագիւտ չեն բռնկող կրակները, որոնք յարմար բոպէին ոչ մի խանդոտի առաջ կանգ չառնող հրդեհի փոխարկուելու բոլոր տրամադրելի պայմաններն ունին։

Ա. ՋԻՒԱՆՇԻՐԵԱՆ

Օդոստոս 25, 1907, Եալթա.

ՆԱՄԱԿ ՍԵՒ ԾՈՎԻ ԹՐՔԱԿԱՆ ԱՓԵՐԻՑ

Այժմս այս կողմերս աւելի անապահովութիւն և շփոթութիւն կայ՝ քան ներքին գաւառները։

Ուխտանական թուականներէն Ռուսաստանէն գաղթող թրքացած վրացիներու սուսար մեծամասնութիւնը այս կողմերը հաստատուեցաւ, դլխաւորապէս Օրտուէն Պալաման և մինչև Ֆաթցայ երկարող տարածութեան վրայ։ Այդ գաղթականները, որ իրենց կիսավայրենի և ոխակալ բնաւորութիւնէն զատ ուրիշ ոչինչ չէին բերած իրենց հետ, շատ կարճ ժամանակամիջոցի մէջ մեծ դիրք ու ազդեցութիւն ձեռք բերին, որովհետև կառավարութիւնը իրենց բոլոր աբարքներուն վրայ աչք կը դոցէր և թոյլ կուտար, որ ուզածնին ընէին։ Տեղական մահմեդական ազգաբնակութիւնն ալ առանձին քաջալերութիւն և համակրանք ցոյց կուտար անոնց։

Շատ ժամանակ չտևեց, որ տեղական ազգաբնակութիւնը իր սխալը հասկցաւ, բայց դարմանելը այլևս ուշ էր։

Գաղթողները իրենց բարբարոս և դիւրագրգիռ բնաւորութեամբ սկսեցին պատուհաս դառնալ։

Գաղթողների և թուրքերի մէջ սկսուեցաւ արիւնահեղութիւնը և թշնամութիւնը, ժամանակ մը կառավարութիւնը երկու կողմերն ալ շահագրգռել կը ջանար, երբեմն մէկուն կողմը բռնելով՝ երբեմն ալ մէսին, անշուշտ ամէն ինչ կաշառքի հետ կապ ունէր։

Առելութիւնը, կիրքը, թշնամութիւնը ծայրայեղութեան էր հասած՝ չորս տարի է ի վեր, երբ գարնանը երկու սպանութիւններ կատարուեցան Պալամանի մէջ, ձայնը մինչև Պոլիս հասաւ։ Ցուզումը, գայթակղութիւնը իր գագաթնակէտին հասաւ։ Սամսունէն հոս թափուեցան ժանդարմաներ, հազարապետներ, զօրքեր, ինչպէս և Օրտուի գայմագամը։ Այդ բոլորն ի զուր անցաւ, որովհետև սոսնք ալ կաշառքի եռևէն ընկնելով՝ ըրին այն, ինչոր առաջինները ըրած էին իրենց ժամանակին, ուրիշ բան չարիքը, անապահովութիւնը շարունակեց գոյութիւն ունենալ և մեծ չափեր ստանալ։

Տեղացի մահմեդականները քանիցս բողոք և տեղեկագիր մատուցին Սուլթանին, որ իրենց համար բնակութեան տեղեր ցոյց տայ, որպէսզի հոն գաղթեն և այդպիսով աղատուին այս գաղթականներու ձեռքէն, հակառակ պարագային, ըսած էին բողոքողները, մենք հոլատակութենէ դուրս կուգանք և "թերքի թէսլա„ ընելով ուրիշ երկիր կերթանք։

Բողոքողները շատ սպասեցին, բայց պատասխան չստացան, մահմեդական-վրացիները հասողուած են, որ իրենց կը-բնակիցները երբէք պատասխան չեն ստանար, քանի որ իրենք լիք քսակ ունին՝ առատ կաշառներ տալու, և Պոլսոյ մէջ ալ շատ բարձր ատիճան անձնաւորութիւններ ունին զիրենք պաշտպանող։

Այսպէս եկաւոր և ընիկ կրօնակիցներու յարաբերութիւնները խիստ լարուած են և սպանութիւնը, անապահովութիւնը, խռովութիւնը սովորական կեանք կը կազմէ հոս։

Հոս կեանքի, գոյքի և պատուի անապահովութիւնը այն ատիճան է, որ ամէն ոք զէնք կը կրէ. շատ ու քիչ առկանաւոր մարդիկ 2-3 սպառազինուած ծառաներով կը պըտրտին, մինչդեռ ասդին խեղճ հայը դմելի մալ կրելու իրաւունքը չունի, ընդհակառակը կը նկատուի ոճիր և չարադործութիւն, եթէ ժանդոտած սուր բան մը իր քով դտնուի։

Սուլթանի հարատևարիչ կառավարութիւնը իր անյատակ գանձարանը լեցնելու համար սկսած է անխտիր կողոպտել թէ՛ հային և թէ՛ թուրքին, այս տեսակէտով հաւասարութիւն կը տիրէ։ Թուրք տարրն ալ սկսաւ կամաց կամաց հասկնալ թէ ինչ ասել է սուլթանական բռնակալութիւն։ Անվճար մնացած տուրքերու փոխարէն կը դրաւեն անոր ալ

անասունները, հողը և հարան ու կինը կանպատուն. այժմ թուրք ժողովրդի աշխատասեր մասան ալ նիւթապէս հայերէն տարբեր վիճակ մը չը ներկայացնէր, մանաւանդ թուրք գիւղացի դասակարգը։ Եթէ յաւելի բան մը կայ՝ դա թուրք գիւղացիներու ազիտութիւնն է և ճակատագրային համբերատարութիւնը, որ կը նախընտրէ ամէն թշուառութիւն և ամէն զառնութիւն տանիլ, քան թէ իրեն եղած այս զրկանքներուն դէմ ընդդիմադրութիւն ընել։ Սակայն ամէն բան իր վախճանը ունի, չենք կարծեր որ մինչև վերջ կը տևէ թուրք ժողովրդի այս դատապարտելի համբերութիւնը։

Իրողութիւն է, որ այսօրուայ թուրքը նախկին կոյր համակերպողը չէ, անոր մէջ բաւականին սթափուած տարրեր կան։ Կառավարութեան վախը ամենուն սրտերուն տիրած է, սակայն վստահութիւն ներշնչէ անոր և խօսեցուր, կը տեսնես որ դժգոհութեան կայծ մը կայ անոր սրտին խորշերը, ու ատոր համար ալ կառավարութեան խժդժութիւններէ դէմ հայհոյանքի տարափ է՝ որ կը տեղայ։ Ու եթէ նա այսօր բացարձակ չը ընդոստանար ու չը բողոքեր, պատճառն այն է, որ իրեն կը պակսի հաստատուն կամք և դիմացկունութիւն, ինչպէս և առաջնորդող անձնաւորութիւններ։

Ցաւա՞նք որ մեր Համերկրացի թուրք տարրն ալ օր մը ընդունակ կը դառնայ ազատութեան համար կախաղան բարձրանալու։

ՓԱՅԼԱՃՈՒ

3 Օգոստոս, 1907
ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐԷՆ

ՆԱՄԱԿ ՕՐԴՈՒԻՑ

Բաղաքիս գայմագամը փոխուեցաւ Կիրասունի գայմագամին հետ, մեր նախկինը չափազանց արծաթասէր էր, ամբողջ ժողովուրդը կը կողոպտէր։ Կիրասունի ժողովուրդը իրենց գայմագամին հետ կռիւ էին ըրած, այդ պատճառաւ ալ անոնց գայմագամը Օրտու զրկուեցաւ, սա միջին տարիքով մարդ մէ, ի հեռուէս Կիրասունի ժողովրդեան, այժմ հոս շէնցնելու կաշխատի և մեզ նեղութիւն չի տար։

Դալով տուրքերուն, պէտէլը շասի վերկիւսին վերցաւ և եռքը ալ ուրիշ տուրք մը չի նշանակուեցաւ. ծովեզրեայ քաղաքներուն եթէ մնար, բանտերնիս բուրդ էր, կեցցե՞ն ներքին գաւառները, եթէ բռնութեան և հարբուտահարութեան դէմ չբողոքէին՝ մեր կողմերը մինչև վերջ պիտի լայնք։

Պէտելը շախսիէն զատ նշանակուած էր նաև ծանր տուրքեր, ոչխարէն զատ ուրիշ կենդանեաց վրայ ալ, այդ տուրքն ալ նախկին սահմանին իջեցուցին։ Անցեալ տարի կառավարութիւնը ազգահամար ըրաւ, ամբողջ ժողովրդեան համարը ծայրէն առաւ և դարձեալ նուփուսի թուղթ կտրեց ու բաժնեց, իւրաքանչիւր ամէն թուղթին երկու և կէս ղրշ. առաւ, ասկէ ալ մեծ դումարներ հաւաքուեցաւ, այս ազգահամարին մէջ՝ փախչելով օտար երկիր գաղթողները դուրս հանուեցան կառավարութեան ուշադրութենէն, որով և՛ հպատակութենէն, վերջապէս այս ազգահամարն ալ ժողովուրդը կողոպտելու հնարք մ'էր։

Այս կողմերը թուրք և վրացի ժողովրդեան յարաբերութիւնները հայերու հետ լաւ է. հիմայ հոս աչքի առջև կայ թուրք և վրացի ժողովրդերուն միմեանց հանդէպ ունեցած ատելութիւնը, որ ասկէ չորս հինգ տարի առաջ վրացիներէն Ֆայլոզմիին տղան Օսմանէին՝ Զէլալ օղլիներուն հետ ունեցած կռիւներէն յառաջ եկաւ. երբ Օսման գաղմանը զարնուեցաւ՝ ատոր վրայ թուրք Զէլալ օղլուն ալ զարկին, ուրիշներ ալ զարնուեցան երկու կողմէն. այսպէս հակառակութիւնը շարունակուեցաւ. այն ժամանակէն ի վեր գաղթականները շատ դէշ ցան՝ ամէն տեսակ աւազակութիւն և գողութիւն կընէին, անոնց վրայ նայելով թուրքերն ալ ըսկսան դէշութիւն ընել, գրեթէ անիշխանութիւն կը տիրեր, մանաւանդ նախորդ գայմագամին օրով։ Կառավարութիւնը ատոր կարևորութիւն տուաւ, ամէն կողմ ոստիկաններ սկսան քալել, շատ գողեր, աւազակներ, սրիկաներ բռնուեցան և բանտ դրուեցան՝ բանտը չափազանց լեցուն է և հետզհետէ ալ գալու վրայ է, 15 օրէն աւելի բանտը մնացողներ Ցրապիզոն կը զրկուին՝ այստեղի բանտի փոքրութիւնէն. այժմ բաւական հանդարտած է, թէև տակաւին մեծ բարեկարգութեան կարօտ է։ Ցրապիզոնի նախկին աւանակ նահանգապետին տեղ վերջերս ուրիշ աւանակ մ'ալ եկաւ, անցեալները անիկայ ալ դնաց՝ նոր մը եկաւ. տեսնանք նորեկը ի՞նչպէս է, ամէն պարագայի տակ աս ալ անոնց նման է, կարծեմ։ Ատոր հակառակ՝ Սեբաստիոյ նահանգապետը շատ կարող և խելացի մարդ մըն է, և Սեբաստիոյ նահանգին մէջ, մեղի զրոյցի ըլլալով հանդերձ՝ կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ, մեր գաւառի աւազակները Սեբաստիոյ նահանգին սահմաններէն ներս չեն կրնար անցնիլ։ Անցեալները Համիտիյէյի ճամբորդներ Օրտուի գաւառին մէջ կը կողոպտուին, կերթան Սեբաստիոյ նահանգապետին աղերսագիր կուտան, որովհետև Համիտիյէ Սեբաստիոյ մասն է, անմիջապէս նահանգապետը լուր կը զրկէ Համիտիյէյի գայմագամին որ կամ աւազակները գտնէ՝ յանձնէ իրեն և կամ պաշտօնէն հրաժարի՝ գայմագամը անմիջապէս 15 հատի չափ սիւվարիներ առնելով՝ եկաւ Օրտու ու անմիջապէս ալ առաւ տարաւ, եթէ օրտուցի ըլլային կողոպտողները՝ աւազակներուն եռևէն չէր ըլլար։

Դալով գաղթելու խնդրոյն՝ ներքին գաւառներէն եղած գաղթականութեանց մասին տեղեկութիւն չունիմ, միայն ասկէ եղած գաղթականներու վրայօք պիտի խօսիմ, եթէ այստեղի գիւղացիներէն դէպի Ռուսատան թէրդի թէպայով գաղթողներուն չափ՝ ներսերէն ալ կը գաղթեն, շիտակը շատ յաւելի բան կըլլայ, ահա 3-4 ամիսէ ի վեր սկսած է հոստեղէն թէրդի թէպաա ընելով գաղթելը և 150 չափ գիւղացի ընտանիքներ գաղթած են Ռուսատան, թող քաղաքէն մեկնող երիտասարդներ և օրիորդները, նաև գիւղացի երիտասարդները և մարդիկները, որոնց ընտանիքները հոս թշուառութեան մէջ կը հեծեն։ Հոստեղ մօտիկը՝ Ալաճատաղ անունով հայ գիւղ մը կայ, 20 տուն ունի, սրուն հագիւ 5-6 տան մէջ երիկ մարդ կայ, մնացեալները ամբողջ Ռուսատան փախած են, ընտանիքնին ալ վերջէն բերելու համար. այսպիսի գիւղեր տակաւին շատ կան, ո՞ր մէկն համրեմ։ Հիմայ գիւղը կենալով՝ լաւ հասկցայ խելՀ գիւղացիներուն քաշածները, որոնց պատճառաւ ալ կը գաղթեն։

Այսօր կուգայ աւազակ մը քիչ մը պատսպարան կը պահանջէ, քանի մը օր կուտէ՝ կը խմէ, ատոնց գործերէն մինչև քո կրօնական գործերուդ կը խառնուի և ահա վերջն ալ քեզմէ 5, 10, 20 կամ աւելի ոսկի կը պահանջէ, վա՜յ քեզի՝ եթէ չտաս. ան կերթայ՝ ուրիշ մը կուգայ։ Անխիղճնե՜ր, ուտել խմելէ զատ աղջկանդ, հարսիդ ալ աչքը կը անկեն և ահա օրին մէկը մուր կը քսեն ընտանեացդ ճակտին, կրնա՞ս, ձայն բարձրացուր։ Այս վիճակը աւելի ծանրացաւ գաղթական սրիկաներուն դէմ եղած հալածանաց համար, որոնք տունէ տուն փախտական՝ ասղին անղին ապաստանարան կը փնտռեն. ասոնք ամբողջը գործնականապէս տեղի ունեցած են և կունենան հետզհետէ։ Այժմ լեռը կայ աւազակապետ Թափան օղլուն, որ թուրք է, ասիկայ Քէօսէյին տղան՝ հրուչակաւոր աւազակապետ Ալանին ընկերն էր և անոր զարնուելէն յետոյ հիմակ ինք կը շարունակէ աւազակութիւնը, 4-5 հատ թուրք ընկերներով. նաև մէկ ալ Իմիրալի գիւղացիներէն, քաջ և վարպետորդի հայու մը ընկերակցութեամբ, այս հայն ալ Ալանին ընկերն էր։ Այս աւազակախումբը այժմ տեղի գիւղացիներէն դրամ կը պահանջէ, քանի մը հոգիէ ընդդամէնը 40 ոսկիի չափ. այս նեղ ժամանակին մէջ, որ բերքերը տակաւին եղած չէ, ժողովուրդը պարտքով կորեկ կառնէ ու կուտէ, նայինք վերջը ինչ կըլլայ։

ՕՐՏՈՒՑԻ ՄԸ

23 Յուլիս 1907
ՕՐՏՈՒ

ՆԱՄԱԿ ԶՄԻՌՆԻԱՅԻՑ

Անօրինակ բանութեան հալածանքը Ցանձկաստանի մէջ ստեղծած է ահռելի կեանք մը, որը իրական և մանրամասն գոյնով պատկերացնելու համար՝ հարկ պիտի ըլլայ ամբողջ հատորներ կազմելու։

Յիշենք սակայն այն իրողութիւնները, որոնք՝ թարմ են ու այժմէական անցուդարձներու բնոյթը ունեն։

Բարբարոս կառավարութիւնը կը հետապնդէ ամէն կարելի ու հնարաւոր միջոցներով օր առաջ պարպել Մաղնիսայի հայ բնակչութիւնը և անոր տեղը լեցնել այժմեան դաղթական կրետացի աւազակ տարրերը։ Շատ մը հայ տուներ արդէն պարպուած և լեցուած են վերջիններով։ Քանդումի այս ծրագիրը վճռական թափով ու արագութեամբ պիտի շարունակուի, որովհետև տեղին խաղաղ հայ տարրը "կասկածելի" երևցած է ճիւաղ կառավարութեան։

Իզմիրի և շրջակայ հայ գիւղերուն մէջ 1905-ին կատարուած ձերբակալութիւնները բանտերը լեցուցին խումբ-սումբ հայ երիտասարդներով, որոնցմէ մեծ մասը տակաւին կը մնան։ Այն մարդը, որ իր կոչին վրայ կրեր է բանտային տանջանքները, անիկա միայն որոշապէս դիտէ թէ ի՞նչ է արդեօք թրքական բանտը։ Խեղճ բանտարկեալները, որոնք անմեղ և անմասն են մնացած կատարուած դէպքերուն, այժմ բանտին մէջ թրքական արդարադատութեան օրէնքներով կը տոպլոկին։ Սակայն այդ ալ չը կրցաւ յաջողիլ ոճրագործ կառավարութեան։ Անիկա ձերբակալութիւնները մինչև այսօր կը շարունակէ՝ ամենաթեթև պատրուակներու տակ։

Վիլայէթիս նոր վալին եկած օրէն սկսեալ, խստութիւնները կրկնապատիկ սաստկութեամբ առաջ կը տարուին։ Զմիւռնիոյ մէջ իսկ, որ Ծովեղերեայ եւրոպական գաղութային կեդրոն մըն է, կառավարութիւնը մաղաչափ անգամ չի շեղիր իր ընդհանուր ծրագրէն։ Ցոյն ազգաբնակութիւնն ալ այժմ թշնամի է հայերուն։ Թուրք խուժանը անդիսակից գործիք մըն է միշտ կառավարութեան ձեռքին։ Էրզրումի և Դատրեմանների դէպքերը չկրցան շարժել անոր իր դարաւոր թմրութենէն։ Եւրոպական հիւպատոսները, կատարուած իրականութեան հանդէպ, անհոգ ու անտարբեր են։ Անոնք իրենց շահերովը կը մտահոգուին։ Վերջերս լսեցինք, որ Անգլիական հիւպատոսը բժիշկ անօրէնութիւնը ձեռք բերելու կաշխատի. իսկ Ֆրանսիականը Զմիւռնիոյ ամենէն դեղեցիկ վայրին, քարափին վրայ, հոյակապ շէնք մը բարձրացուց։

Քանի մը օր առաջ Իզմիրի բանտարկեալները դիմում բրած էին հիւպատոսներուն՝ իրենց անտանելի դրութեան թեթևացում խնդրելու համար։ Սակայն, բանտարկեալներէն 8 հոգի աքսորուեցան Պոտրում։ Ինչո՞ւ համար, — դժուար է պատասխանելը։ Միայն կը կասկածուի թէ՝ կառավարութիւնը անոնց յանդգնութիւնը պատժելու համար է, որ աքսորեց։

Մաղնիսայի կառավարիչը տակաւին Մէհմէդ Դալիպ պէյն է, Սուլթանի Հաւատարիմներէն մէկը։ Փոլիս քոմիսէրի ընտրութիւնը ճարպիկօրէն ամբաստանելու յատկութիւն ունեցող փոլիսներու մրցումէն կախում ունի։ Ամէն մարդ տխուր է և սպառոր։ Ոչ մէկը կը համարձակի քիչ մը ուշ ատեն դուրս դալ՝ շրջագայելու համար։ Տնտեսական տագնապը դրեթէ ընդհանուր է։ Հայ առևտրը օրըստօրէական կերպով անկման կը դիմէ։ Արհեստները հաստատապէս ինկած են։ Երբեմնի ծաղկեալ ատաղձանկութիւնն ալ, որ հայերուս մէկ ապահով դործն էր, այժմ իր նշանակութիւնը կորսընցուցած է։

Վերջապէս կացութիւնը ծանր է։ Ե՞րբ պիտի, արդեօք, հնչէ հատուցման ժամը, ուր արնախում կառավարութիւնը ժողովրդի արդար դատաստանին առջև ելլէ։

ԶԱՐՄԱՅՐ

15 Օգոստոս, 1907 ԶՄԻՌՆԻԱ

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

Երկու-երեք ամիս առաջ ցրուած բէտիֆները այսօր խիստ կերպով հաւաքելու վրայ են՝ Եէմէն ուղարկելու համար։ Արդէն Արաբները ընդվզմութիւն ցոյց կուտան. շատերը սկսան լեռները փախչիլ. աւազակութիւնները միշտ անպակաս են։ Անախորժ թուրք ժողովուրդը բուռն յամառութիւն ցոյց տուաւ բէտիֆ չտալու համար։ Բայց կառավարութիւնը վախենալով որ մի գուցէ այդ ըմբոստութիւնը արձագանգ գտնէ ուրիշ քաղաքներու մէջ, անոնց բէտիֆները հաւաքելը յետաձգեց. սակայն ժողովրդեան մէջ վերջին ծայր գրգռում կը տիրէ։

Այս տարի սուլթանի գահակալութեան տարեդարձին հրաւառութիւն չը պիտի լինի, թէ ինչո՞ւ,—յայտնի է, կա՛մ դրամի պակասութենէն և կամ երկիւղէն է, որ մի գուցէ պատրուակով մը շարժումներ յառաջանան։

Գուլիարիոյ սահմաններէն բաղմաթիւ թուրք գաղթականներ կուգան այս կողմերը։

7 Օգոստոս, 1907 ԿԻԼԻԿԵՑԻ

ՄԻԱԶԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ՖՐԱՆՍԻՍ

ՆԱՆՍԻԻ ԿՕՆԳՐԷՍԸ

Ֆրանսիական Սոցիալիստ Կուսակցութեան Ազգային Դ.-րդ Կոնգրէսը (Գործաւորական Միջազգայնականի Ֆրանսիական հատուած) տեղի ունեցաւ Նանսիում, Ժողովրդական Տան մէջ, 1907 օգոստոսի 11, 12, 13, 14 և 15-ին։

Պատուիրագրերը (մանդատները) վերստուգող Ցանձնաժողովի զեկուցագրերից երևում է, որ Կոնգրէսին մասնակցել են 68 Մասնաճիւղեր (fédération, դաշնակցութիւններ) 308 մանդատով։ Ներկայ են եղել 188 պատուիրակներ, 6 պատուիրակներ էլ օտար երկրներից եկած, ուրեմն ընդամէնը 194 պատուիրակ էին մասնակցում Կոնգրէսին։

Կոնգրէսի բացմանը, Մեցցի և Ալլաս-Լօրրէնի սոցիալիստների պատգամաւոր Շլէյլիերը իր ողջունարար ճառի մէջ հետևեալն է ասում.

"Ալլաս-Լօրրէնի սոցիալիստները մեծ հաճոյքով ընդունեցին հրաւէրը՝ ներկայ լինելու այս Կոնգրէսի աշխատանքներին։

Ալլաս-Լօրրէնի անջատումից, սոսկալի տարիից յետոյ, այս առաջին անգամն է որ Ալլաս-Լօրրէնի պրոլետարիատը դալիս է, եղբայրական մի խօսքով, հին հայրենիքի եղբայրների ձեռքերը սեղմելու։

Մինչև որ սոցիալիստական շարժումը չլիներ՝ բոլոր երկրների մէջ այդ համաձայնութիւնը չէր լինիլ։ Մինչև որ Կարլ Մարքսի, Լիբկնեխտի, Ժորէսի, Վայանի, Գեդի նման մարդիկներ չլինեին, անկարելի պիտի լիներ աշխարհիս բոլոր աշխատաւորների մէջ եղած այս համաձայնութիւնը կայացնել։

37 տարուայ անջատումը, դրականեան օրէնքները, դիկտատուրան անկարող եղան ալլաս-լօրրէնցի պրոլետարիատի սրտից ջնջել եղբայրական այն զգացումը, որ նա ունի դէպի իր հին մայր-հայրենիքի եղբայրները։

Ինչ էլ որ ասելու լինեն ազգայնական թերթերը, իրողութիւնն այն է՝ որ Ռայխստագի բացմանը, պատերազմից յետոյ, գերմանական Սոցիալիստ Կուսակցութիւնը, Լիբկնեխտի և Բեբելի բերանով, բողոքեց Ալլաս-Լօրրէնի անջատմանը դէմ։

Որպէս Ալլաս-Լօրրէնի մեր եղբայրների կողմից յատկապէս

ուղարկուած պատուիրակ՝ ձեռ եմ բերում Ալպաս-Լոբրէնի պրոլետարիատի եղբայրական ողջոյնը։

Այն ժամանակաշրջանում, երբ աշխատող ժողովուրդը դեռ անդիտակից էր դէպի իր եղբայրները ունեցած պարտականութիւնը. միստեռութիւնները կարողացան, կոպիտ ոյժի շնորհիւ, եղբայրասպան կռիւներ սկսել և պատերազմի դաշտի վրայ երկու ժողովրդների արիւնը հոսեցնել, յոյս ունենք որ այդ ժամանակաշրջանները այլեւս չեն վերակրկնուիլ, որովհետեւ դաշնակցած միստեռութիւնների կողքին, այսօր, գոյութիւն ունի միջազգային կազմակերպուած մի պրոլետարիատ, որի ոյժը պէտք է հաշուի առնել։

Այս զգայումներով է, ահա՛, որ ես ողջոյն եմ բերում ֆրանսիայի եղբայրներին . . .”

Բելգիական Գործաւորական Կուսակցութեան քարտուղար Մայէսը ուրուագծում է իրենց գործունէութիւնը Բելգիայում, որ արտայայտւում է հետեւեալ բառերով. “սէնդիկալիզմ, սոցիալիզմ և սոցիալիստական գործակցութիւն”։

ՀԱԿԱԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (ԱՆՏԻՄԻԼԻՏԱՐԻԶՄ) ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

Միջազգային նշանակութիւն ունեցող այդ հարցի մասին դրւում են հետեւեալ առաջարկները։

Ա.—Ի օ ն ի ա ռ ա ջ ա ր կ ը.

“Կոնգրէսը նկատելով որ պրոլետարների համար շատ մեծ փոյթ չէ իրենց շահագործող կապիտալիստների ազգային և կառավարական պիտակը.

Որ աշխատաւոր դասակարգի շահը պահանջում է, առանց հնարաւոր խտրութեան, կռիւ մղել միջազգային կապիտալիզմի դէմ.

Ժխտում է բուրժուա և կառավարական հայրենասիրութիւնը, որ ստորէն հաստատում է թէ միևնոյն երկրի բոլոր բնակիչների մէջ շահերի ընդհանրականութիւն կայ.

Հաստատում է որ ամէն երկրների սոցիալիստների պարտականութիւնն է միայն կուռել կոլեկտիվիստ կամ կոմունիստ ռէժիմի պաշտպանութեան համար՝ երբ կարող լինեն հաստատել այն.

Եւ եւրոպական խաղաղութիւնը վրդովել սպառնացող գիւանագիտական զանազան միջադէպերի առաջ, հրաւիրում է բոլոր քաղաքացիներին՝ որ ամէն տեսակ պատերազմի յայտարարութեան, մինչ կողմից էլ դարս լինի, պատասխանեն զինուորական գործադուլով և ապստամբութեամբ”։

Դ օ ր դ օ յ ն ի ա ռ ա ջ ա ր կ ը

“Նկատելով որ միջազգային բոլոր կոնգրէսների ճանաչած և յայտարարած միլիտարիզմը բնական և անհրաժեշտ արդիւնք է շահերի և դասակարգերի հակամարտութեան վերայ հիմնուած կապիտալիստական ռէժիմի, որ կարող է անհետանալ միայն իր պատճառի, այն է՝ կապիտալիստական ռէժիմի չքացումով։

Նկատելով, հետեւաբար, որ բոլոր աշխատաւորների ջանքերը կեդրոնացնելով այժմեան ընկերութեան միջից զինուորականութեան (միլիտարիզմի) ջնջուելուն վրայ՝ այդպիսով կոմայ ակամայ կատարում է ընկերային պահպանողականութեան մի գործ, խոտորեցնելով գործաւոր դասակարգին նրանից՝ ինչը իր միակ մատհոգութիւնը պիտի լիներ, այն է՝ քաղաքական իշխանութեան տիրելու՝ կապիտալիստական սեպհականատիրման (էքսպրոպրիացիա) և արտադրութեան միջոցների սեպհականացման համար.

Նկատելով, միւս կողմից, որ դիւրախոս և մեղսակցող այդ միլիտարիզմով չատապրուած միջոցները (դասալքութիւնից և զինուորական գործադուլից սկսած՝ մինչև ապստամբութիւն) միայն բարդացնում և աւելի դժուարացնում են սոցիալիստական պրոպագանդան և նորակոչ սոցիալիստներ ձեռք բերելը (recrutement), այսպիսով հեռացնելով այն բոլորին՝ երբ պրոլետարիատը բաւականաչափ կազմակերպուած և ուժեղ կլինի ընկերային յեղափոխութեամբ վերջ տալ ամէն միլիտարիզմի և ամէն պատերազմի.

Յայտարարում է, որ միլիտարիզմի դէմ և խաղաղութեան համար մղուող պայքարը, երազատեսութիւն (utopie) և վտանգաւոր չլինելու համար, սոցիալիստական այն պայքարն է, որ ամբողջ աշխարհի աշխատաւորներին կազմակերպում է կապիտալիզմը կործանելու համար, իսկ մինչ այդ՝ միջազգայնօրէն հետապնդած զինուորական ծառայութեան նուազեցումով, պատերազմական, ծովային և դաղութների ամէն վարկի մերժմամբ մերժումով և մշտական բանակին փոխարինող ժողովրդական զինումով է որ՝ կարելիութեան սահմանի մէջ, միջազգային ընդհարումները ի դերև պիտի հանուին”։

Լ ի մ օ ժ ի (Սէնի) ա ռ ա ջ ա ր կ ը.

I

“Կոնգրէսը նորից հաստատում է միջազգային Կոնգրէսների որոշումները.

1.—Միլիտարիզմի և կայսերականութեան դէմ եղող գործունէութեան առթիւ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ Պեռութեան կազմակերպուած զինումը՝ գործաւոր դասակարգին կապիտալիստ դասակարգի քաղաքական և տնտեսական լծին տակ պահելու համար.

2.—Բոլոր երկրների գործաւորներին յիշեցնելու համար, որ մի կառավարութիւն չի կարող սպառնալ մի օտար ազգի անկախութեանը՝ առանց եղեռնագործութիւն գործելու այդ ազգի և նրա գործաւոր դասակարգի ու նոյնպէս միջազգային գործաւոր դասակարգի դէմ. որ սպառնալիքի ենթակայ եղող ազգը և իր գործաւոր դասակարգը հրամայական պարտականութիւն ունին իրենց անկախութիւնը և ինքնավարութիւնը պաշտպանելու այդ եղեռնագործութեան դէմ, և իրաւունք ունին, այդ նկատմամբ, յոյս դնելու բոլոր երկրների գործաւոր դասակարգի վրա.որ սոցիալիստ կուսակցութեան հակամիլիտարիստական և լոկ պաշտպանողական քաղաքականութիւնը, այդ նկատմամբ, նրան պատուիրում է հետապնդել բուրժուազիայի զինուորական զինաթափմանը և գործաւոր դասակարգի զինումը՝ ժողովրդի ընդհանուր զինումով։

II

Կոնգրէսը, միջազգային նախորդ Կոնգրէսների և Միջազգային Բիւրոյի որոշումները հաստատելով, նկատում է բոլոր ազգերի պրոլետարների և սոցիալիստների միջազգային համերաշխութիւնը՝ որպէս նրանց առաջին պարտականութիւն.

Նրանց յիշեցնում է, որ ամէն տարի մայիս 1-ին՝ ցոյց կատարելով այդ համերաշխութեան և նրա առաջին անհրաժեշտ պայմանի՝ միջազգային խաղաղութեան պահպանման համար.

Եւ, այն ժամանակ՝ երբ ռուսական նորածին յեղափոխութեան, հոգեվարքի մէջ գտնուող ցարիզմի և սրան օգնել մտածող հարեւան կայսերականութիւնների (էմպէրիալիզմ) հանդէպ. երբ կապիտալիստների դաղութային անպարտում նախաձեռնարկների և յափշտակութեանց (ծավահէնութեանց) հանդէպ, Միջազգային Բիւրոն և միջնորդարանական կոնֆերանսը կարող եղան, ամէն երկրների սոցիալիստների հաւանութեամբ, անհրաժեշտ որոշումներ ձեռք առնելու պատուիրակներին միատեղ դումարելու և նրանց կարող դարձնելու, միջազգային սպառնալից բաղխումի դէպքում, միջոցներ որոշելու այդ բաղխումը խափանելու և արդիւնաւորելու համար.

Նրանց հրաւիրում է, ապագային և միջազգային սոցիալիստական և գործաւորական կազմակերպութիւնների միջոցով, այդ որոշումների արդիւնքը հնարաւոր դարձնել, կանխա-

պատրաստուած, կարգաւորուած և ազատագրուած մի գործունէութեամբ. որ ամէն երկրի գործաւոր դասակարգի և սոցիալիստ կուսակցութեան ամբողջ եռանդը, նախ միաբանուած երկրներում և իրականութեան մէջ եղող հանգամանքների համաձայն, գործ է դնում խափանելու և արգիլելու համար պատերազմը ամէն միջոցներով, սկսած պարլամէնտական միջամտութիւնից, հասարակական ագիտացիայից, ժողովրդական ցոյցերից (մանիֆէստացիա) մինչև գործաւորական ընդհանուր գործադուլ և ապստամբութիւն"։

Քաղաքացուհի Պ ե լ լ ը տ ի է ն խօսում է Դօրդոյնի առաջարկի դէմ։ Նա չի ընդունում որ հակազինուորականութիւնը շեղումն լիներ, ինչպէս որ կարծում է։

Մ ի շ ե լ ը ներկայացնում է Դօրդոյնի առաջարկը ասելով.

Այդ դաշնակցութիւնը (մանաւանդ ինտրական մտահոգութիւններով չէ, որ ընդունել է այս առաջարկը։ Նա միակ ցանկութիւն է ունեցել պրոլետարիատին դիւրացնել և աւելի ազդու դարձնել։ Անտիմիլիտարիզմը (հակազինուորականութիւնը), Հերվէի հասկացածին համաձայն, մի շեղումն է։

Նորակոչ զինուորներին ասելով՝ որ նրանք չպէտք է կրակեն իրենց թշնամութեան եղբայրների վրայ, աշխատաւորների միջազգային համաձայնութիւնը զարգացնելով՝ պատերազմները արգիլելու համար, մենք այդպիսով գործնական հակազինուորականութիւն (անտիմիլիտարիզմ) ենք կատարում։ Պրոլետարիատին ահաբեկող տարտամ և անորոշ բառաձևեր քուէարկելը անօգուտ է։ Լիմօժի առաջարկը դհայցուցիչ կերպով պարզ չէ։ Դօրդոյնի առաջարկը ամէն երկմտութիւն վարատում է։

ԴԷԴԻ ՃԱՌԸ

"Այդ հարցը Ֆրանսիական Սոցիալիստ Կուսակցութիւնը չի յարուցել, այլ Միջազգայնականը (l'Internationale)։ Բիւրան այդ հարցը որոշեալ սահմանների մէջ դրեց։

"Հարցը հակազինուորականութեան հարց չէ։

"Օտար երկրների սոցիալիստ կուսակցութիւնները գուցէ ծերացած են. եղակի կուսակցութիւնը միայն մենք ենք։ Մենք ամէն ինչ քարոզում ենք՝ հակակղերականութիւն, հակաանդիկութիւն, ամէն ինչ՝ բայի սոցիալիզմից։

"Շտուտգարտին ներկայացուած հարցը մի կեղծականն է. — Զինուորականութիւն՝ և միջազգային ընդհարումներ։

"Մենք միշտ համաձայնել ենք ներքին միլիտարիզմի հարցի մասին։

Մենք միշտ ասել ենք, որ աշխատաւոր մի զինուոր իր եղբայրների վրայ հրացան չպէտք է պարպի։

"Մանաւոր ուշադրութիւն դրաւող խնդիրը միջազգային ընդհարումների խնդիրն է։

"Շտուտգարտի նախօրեակում՝ մի հակառաջարկ են մեզ ներկայացնում։

"Մենք պարտականութիւն ունենք մեզ հարցնելու՝ թէ արդեօք կարո՞ղ ենք Լիմօժի առաջարկով Շտուտգարտ ներկայանալ։

Դօրդոյնի առաջարկի կողմնակիցները հաստատում են, որ Լիմօժի առաջարկը խառնափնդոր և հակասական է։

"Առաջին մասը գեր-հայրենասիրական մի առաջարկ է, ասորական հայրենասիրութիւնից նա դեռ անցին է անցնում։ Նա կոչ է անում, որ պրոլետարները, ամէն կողմից՝ Բելգիայից, Իտալիայից, Լայպցիգ, Լայպցիգ, դան և ազգային պաշտպանութեան գործը ստանձնեն։ Դա ճիշդ հակառակն է Իենի առաջարկին։ Սէնի և Իենի առաջարկների միջև մի վիհ կայ. այդ վիհը կարելի է լցնել բառերով, բայց ոչ փաստերով։

"Երկրորդ մասը, ապստամբութեան և ընդհանուր գործադուլի խորհուրդ տալով, առաջինի հետ ուղղակի հակասութեան մէջ է։ Ես բողոքել և տակաւին բողոքում եմ այն մասին, որ եթէ մենք ապստամբութեան իրաւունքն ենք յիշեցնում, ապա դա պիտի լինի աշխատանքի ազատագրութեան համար, և ոչ թէ պատերազմի յայտարարութեան կամ մեր կաշին փրկելու համար։ Վերջապէս, Լիմօժից յետոյ մի նոր իրողութիւն կայ, այն է՝ գերմանական Սոցիալ-Դէմոկրատիայի յայտարարութիւնը, որով Բեբելը ասում է թէ միտք ունի Գերմանիայի պաշտպանութեանը նպաստել։ Զէնքի կը դիմեն։

"Դուք պատրաստում էք Շտուտգարտ երթալ՝ երկիրը ուրիշին յանձնելու երևոյթով։" (Շատ պատգամաւորներ ծափահարում են։)

ՎԱՅՑՆԵՆ ՃԱՌԸ

Վայանը յայտարարում է, որ Դէդի մեկնաբանութիւնը ճիշդ չէ։ Նա վերսին կարդում է Սէնի (Լիմօժում ընդունուած) առաջարկը, նա ցոյց է տալիս, որ առաջին մասը միջազգային Կոնգրէսների բոլոր որոշումների վճիռների մի ամփոփումն է։ Ինչոր վերաբերում է երկրորդ մասին, նա արձանագրում է, սկզբունքների համաձայն, մի նոր իրողութիւն, — այն է՝ ուժեղ, գործելու ընդունակ մի Միջազգայնական (Էնտերնացիոնալ) հաստատութիւնը։ Որ դա ճշմարիտ է՝ դրան սպացոյց կարող է լինել նրա գործունէութեան սկզբնաւորութիւնը, այն է՝ Միջազգային Բիւրոյի, մեր խնդրանքի համաձայն, որշում՝ անմիջապէս իր պատուիրակներին կանչել ընդհարումը արգիլելու համար։ Հասկանալի եղաւ թէ պէտք է որ Միջազգայնականը, հանդէս բերելով հանգամանքին համեմատ ընդունուած քոլոր որոշումները, հնարաւոր միջոցներ գտնէր ընդհարման պարագային։ Որոշումը միջազգային ջանքի մի հեռանկար է։

Համաձայն ենք որ զանազան երկրների մէջ տեղի ունեցող իրերը մենք տարբեր կերպով կարող ենք հասկանալ։ Ցայտնի բան է՝ զինուած միջազգայնականի կարիք չկար, որ արգիլեր, Ֆրանսիայում, Մարոկկեան սէնդիկատի միջամտութիւնը։

Բայց ինչոր մենք ուզում ենք, մեր կարգաւորած գործունէութեամբ, այդ այն է՝ չթողնել որ պատերազմը ծագի, առանց որ մենք կարողանայինք մի բան անել։

Սոցիալիզմը հնարաւոր դարձնելու համար՝ պէտք է նոր միջավայր, նոր մտայնութիւն ստեղծել։ Մեր ընդդիմանը երկարատև ճիգերի կարօտ մի գործ է։ Մենք Միջազգայնականը աւելի կրաշենք՝ միահոգոյն միջամտութեան համար։ Բեբելից մենք կպահանջենք, որ Մանհեյմի մէջ իր ասածը կատարի, այն՝ "Որ Գերմանիայի գործաւորները ոտքի կկանգնեն, եթէ կայսրը միջամտել ուզի ռուսական յեղափոխութեան դէմ"։

Նրանից մենք կպահանջենք նոյն իսկ աւելի առաջ երթալ և ճանաչել որ ընդհանուր գործադուլը գործունէութեան նոյնքան ազդու միջոց է պատերազմի դէմ, որքան որ հանրաքուէի համար։

Այդպիսի մի առաջարկի ընդունելը անհրաժեշտութիւն է։ Այն հանգամանքները՝ որոնցից ծնունդ է առել այդ առաջարկը, յանկարծ կարող են նորից երևիլ։

Վերջապէս, եթէ կարծեցեալ այդ շեղումը պէտք է պաշտպանել, պարտականութիւն չէ՞ միթէ պեռութիւնը զրկել իր օժանդակիչ ոյժերից, այն է՝ զինուորականութիւնից և կղերականութիւնից։

Մենք մարտնչում ենք զինուած կապիտալիզմի դէմ, այն կապիտալիզմի՝ որ Նարբոնի մէջ հրացան պարպել տուեց ժողովրդի վրան։ Պէտք է կապիտալիզմից այդ զէնքը խլել։ Մեր Կուսակցութիւնը լոկ ընտրողական մի կուսակցութիւն չպիտի լինի։ Քննեցէ՛ք ձեր խղճմտանքը և կտեսնէք որ կուսակցութիւնը, դրեթէ, արդէն ընտրողական մի կուսակցութիւն է։ Մի թէ վերջին ժամանակների յեղափոխական գործունէութիւնը Աշխատանքի Ընդհանուր Դաշնակցութեան պարտական չենք։ Եթէ ցանկանում էք այդ կազմակերպութեան մօտենալ, ուրեմն մարտնչեցէ՛ք, կուռեցէ՛ք մինչև հողի վրայ կանգնած։ Գործադրեցէք քաղաքական ուղղակի գործունէութիւն։ Այդպէս անելով՝ այլևս ժամանակ չէք

վանիլ, ձեր ընտրածներին քննադատութեան առնելով։

Մենք Շաուզարա պիտի երթանք պարզ և յստակ կերպով ասելու թէ՝ "մենք մինչև այստեղ պիտի երթանք". դո՞ւք մինչև ուր պիտի երթաք։ Ասացէ՛ք մեզ, և ձեր պատասխանը կընդունուի մեր Կուսակցութեան կողմից։ (Ծափողջոյն։)

ԼԱՖԱՐԳԻ ՃԱՌԸ

... Լաֆարգը կշտամբում է Հերվէին այն մասին, որ նա բնաղանցական հակազնուորականութիւն է քարոզում՝ աչքի առաջ ունենալով եւրոպական մի պատերազմ, ինչոր անտեսապէս անկարելի է։ Լիմօժի առաջարկին դալով, նա ընդունում է սոցիալիստական գործունէութեան անհրաժեշտութիւնը՝ պատերազմը արգիլելու համար։

Երեք սիստեմ կայ, եզրակացնում է Լաֆարգը, առաջինը՝ Հերվէինը, որ խորհուրդ է տալիս գործաւորներին բուրժուազական ազատա-խոյսների հակազնուորականութեանը հետևիլ։ Երկրորդը՝ պատերազմի ժամանակ ապատամբութեան գիմելը։ Երրորդը՝ այն սիստեմը, որ ցոյց է տուել յեղափոխութեան պատմութիւնը, այն է՝ հարկաւոր է որ գործաւորները բուրժուազիային ասեն թէ՝ „մենք կմեկնինք միայն այն ժամանակ, երբ մեզ համար սեպհականութիւն կապահովեք"։

ՀԷՐՎԷԻ ՃԱՌԸ

Հերվէն պաշտպանում է Իոնի առաջարկը։ Նա բացատրում է այդ առաջարկի ծագումը,—այդ այն ժամանակն էր, երբ Ֆրանսիան գտնուում էր պատերազմի վտանգի մէջ, սըբանից մօտ երկու և կէս տարի առաջ, այն ժամանակ՝ երբ նա դաշնակցել էր Անգլիայի հետ, ինչոր նրան յանդգնութիւն էր տալիս Գերմանիայի դէմ ճակատել և երբ արդէն սև ամպերը կուտակուել էին Մարոկկոյի ափերի վրան։ Բայց ինչո՞ւ համար, հարցնում է նա, այդ առաջարկը հէնց բակզրից վատ ընդունելութիւն գտաւ սոցիալիստների կողմից։

Որովհետև ընտրութեանց նախօրեակում այդ առաջարկը կարող էր վնասել կուսակցութեան թեկնածուների ընտրութեանը, և ընդհակառակը՝ որ այդ առաջարկը շատ լաւ ընդունելութիւն գտաւ լիբերալների (անարխիստների) կողմից։

Վերջապէս, շարունակում է նա, ինձ կշտամբում են, որ ես ցանկացել եմ այդպիսի մի դրդեցուցիչ բանաձևով անձնազոհոյց (ռէկլամ) անել ինձ համար։ Այդ բանաձևը իմս չէ, այլ Իոնի Դաշնակցութեան (մանիֆեստի) կօմիտէինը։ Ես միայն նրա մեկնաբանողն եմ։

Հերվէն, այնուհետև, աշխատում է արդարացնել Իոնի առաջարկը, որը, ամէն լաւ միասին առնելով, պարզապէս յայտարարում է թէ նոյն իսկ վտանգի դէպքում գայլերը և ոչխարները չեն կարող եղբայրանալ, և այդ ժամանակն էլ դասակարգային շահերը լիակատարապէս գոյութիւն կունենան։ Արդ, պրոլետարների շահերը պահանջում են, որ նրանք օգտուեն այդ ճգնաժամից և շահագործողների կոկորդից բռնեն։

Երկու միջոց կայ՝ ապստամբութիւն անմիջական կամ ապստամբութիւն զինուելուց յետոյ, մի ապստամբութիւն՝ որի հետևանքը կլինի ձեռք տալ արտադրութեան և փոխանակութեան գործիքների վրան։

Դորդոյնի առաջարկը քննադատութեան ենթարկելով՝ Հերվէն յայտարարեց, որ ինքը ժողովրդական զինուորացմանը (միլիցիա) կողմնակից է։

Հակազնուորականութիւնը (անտիմիլիտարիզմ), շարունակում է նա, պլիտորապէս հիմնուած է դասակարգային կռուի սկզբունքի վրան և, հետևաբար, չեմ հասկանում թէ ինչո՞ւ են ասում, որ նա մի շեղումն է։

Հերվէն ասում է, որ ինքը չի վնասում Կուսակցութեան՝ իր պրոպագանդայով նորանոր դժուարութիւններ յարուցանելով։

Յետոյ նա քննադատում է, քաղաքավարի կերպով, Սէնի առաջարկը, որի մէջ, Դէգի նման, ինքն էլ դանում է հակասութիւն։ Առաջին առաջարկը, յարում է նա, Վայանը դրել է, որ երկրորդը ընդունել տայ Ժօրէսին։

Ամփոփեմ, Դէգը ընդունում է միայն առաջին առաջարկը։ Ես ընդունում եմ երկրորդը, և վերջապէս Լիմօժի Կոնգրէսին երկու առաջարկներն էլ ընդունուեցան ժամանակաւորապէս։

Նա վերջացնում է յայտարարելով, որ եթէ իր քուէն անհրաժեշտ է Լիմօժի առաջարկին մեծամասնութիւն շահել տալու, ապա ինքը չէր սատանուիլ այդ քուէն տալուց, նոյն իսկ եթէ փոքրամասնութիւնը՝ վրէժխնդիր լինելու համար՝ իրեն չընտրէր Մշտական Վարչութեան անդամ։

ԼՕՆԳԷՆ ՄԻՋԱՄՏՈՒՄ Է.

Լոնգէն պատասխանում է Հերվէին, ասելով թէ հայրենիքները թէօրիական իրողութիւններ են և ո՛չ որ ճանաչում է սոցիալիստական շարժումը, նա դիտէ, որ ամէն երկրում պրոլետարիատը մի՞շտ ապստամբել է իր ազդայնութիւնը պաշտպանելու համար։ Նա ասում է, որ չի կարելի Սէնի առաջարկը գեր-հայրենասիրութեան համար մեղադրել, երբ նա ամէն երկրների պրոլետարիատին կոչ է անում յօգուտ այն երկրի, որի վրայ յարձակուել և որին նուաճել են ուզում,—դա արդէն սոցիալիզմի աւանդութիւնն է։ Եւ նա յիշեցնում է որ 1871ին, օրինակի համար, Կարլ Մարքսը, Էնդելսը, Բեբելը միջամտեցին Ֆրանսիայի համար։ Մի ուրիշ տեսակէտից, նա բացատրում է, Սէնի առաջարկը չի պատուիրում որ ամէն ազգ մէն մինակ ընդհանուր գործադուլ անի, կամ ապստամբութիւն յարուցանի, այլ միջազգային և միաբան մտածուած մի գործունէութեամբ ընթանայ։

—"Ես չեմ տարակուսում, ընդհատում է Դէգը, որ շահագրգռուած երկրները կկատարեն իրենց յանձն առած պարտականութիւնը. բայց ես ասում եմ, որ այն ազգը, ուր կլինին աւելի մեծ թուով սոցիալիստներ, նա ամէնից աւելի խաբուածը կլինի։ Միջազգային սոցիալիստական Բիւրոն երբեք այդպիսի պատասխանատուութիւն յանձն չի առնիլ"

"Ինչոր չի կարելի ընդունել, պատասխանում է Լոնգէն, այդ այն է՝ որ երեք միլիոն գերմանացի և մէկ միլիոն ֆրանսիացի սոցիալիստները հրաժարուեն ամէն փորձի ձեռնարկելուց և չաշխատեն զլխուած մի ընդհարման սոսկալի պատահականութեան առաջն առնել։

Լոնգէն վերջացնում է պնդելով յօգուտ Սէնի առաջարկին։

ԳՕՐԺՐՕՆԸ պաշտպանում է այն միտքը թէ՝ եթէ իրաւ է որ սոցիալիստ կուսակցութիւնը ընդհանուր գործադուլ կարող է անել պատերազմից խոյս տալու համար, ապա անհասկանալի պիտի լինի թէ նա ինչո՞ւ անմիջապէս չի դիմում յեղափոխութիւն անելուն։

ԴԸԼԱՊՕՐՏ իրեն կողմնակից է ցոյց տալիս Դորդոյնի առաջարկին։

ԴՐԼԷՖՈՒՍ, (վոժժից) հարցնում է Հերվէին, թէ ինքը ի՞նչ կանի, եթէ Գերմանիայի սոցիալիստները իր առաջարկը չընդունեն. մի՞թէ կասի թէ իրեն համար տարբերութիւն չի անիլ թէ ինքը ֆրանսիական Հասարակապետութեան մէջ կապրի կամ գերմանական կայսրի հպատակը կլինի։

"Ես պատասխանում եմ, ասում է Հերվէն, որ ինքս մինակ ապստամբութիւն չեմ անիլ. բայց մի կաթիլ արիւն էլ չեմ տալ այժմեան հայրենիքի համար"։

"Երկրպմութիւն չկայ, պատասխանում է Դրէյֆուս, մենք այս ինդրում չենք ուզում Հերվէի քարոզած դասալքութեանը հետևիլ, և մենք համաձայնում ենք որ Սէնի առաջարկը քուէարկուի, այն պայմանով՝ որ նոյն այդ առաջարկը հաւասարապէս կքուէարկուի և՛ Գերմանացի սոցիալիստների կողմից"։

Բաղաքացուհի ՍՕՐԴԸ պաշտպանում է Հերվեին. "յեղափոխական սքանչելի սերմեր է ցանել Նա" յարում է Սորդը և ցույց է տալիս է թէ ինչպէս Հերվեն շատ մեծ ժողովրդականութիւն է վայելում արտասահմանում։

ՌԻՆՈԴԵԼԻ ճառը

Ռընօդելը ասում է, որ նոյն իսկ Հերվէի առաջարկը անհրաժեշտութիւն է համարում, որ Կուսակցութիւնը այդ հարցը դնի միջազգային Կոնգրէսի առաջ։

Ընդհարումների խնդիրը, ժողովրդների միջև, մի քանի ամսից ի վեր, բոլորովին նոր ճանապարհի մէջ է մտել. մի քանի ամիս կայ, որ մի լուրջ կազմակերպութիւն է ուրուագծուած։ Անհրաժեշտ է այդ կազմակերպութիւնը կատարելագործել, աւելի հաստատուն դարձնել և կոնխապէս միաբանած մտածմունքով հիմունք դնել ընդհանուր մի գործունէութեան այն պարագայի համար՝ երբ ազգերի միջև զինուած ընդհարում կծագէր։ Այս գաղափարը իրականութեան մէջ չէր կարող մտնել՝ միայն այն ժամանակները երբ սոցիալիզմը ազգայնապէս և միջազգայնապէս դեռ բաւականին ուժեղ չէր. այսօր, սակայն, առաջուանը չէ, այժմս ամէն երկրներում Սոցիալիստ Կուսակցութիւնը կարող է ծանրանալ բոլոր կապիտալիստ կառավարութիւնների վրան։ Հայրենասիրութիւնը այնպէս, ինչպէս որ սահմանում են մի քանիսը, զգացմունքի գործ է, ես չեմ ընդունում այդ զգացումը, բայց չեմ էլ ընդունում Հերվէի առաջին ձևի հայեցակէտը, — ես հայրենասէր եմ ազգի անկախութիւնը պաշտպանելու մտքով։

Ռընօդելի յայտարարութիւնը ընդմիջումներ են յառաջ բերում Դէպի կողմից, երբ նա ասում է թէ Դօրդոյնի առաջարկը անգործութեան մի առաջարկ է։ Նա աւելացնում է, որ այդ առաջարկը մեծ վտանգ է թէ ազգային և թէ միջազգային կազմակերպութեան համար, որովհետև նա յայտնում է թէ հակակրոնական թիւն պէտք է անել միայն այն ժամանակ, երբ սոցիալական յեղափոխութիւն տեղի կունենայ։ Սոցիալիստները պարզ կերպով պիտի ասեն աշխատաւորներին թէ նրանք ինչ դիրք պիտի բռնեն միջազգային ընդհարումների հանդէպ, այդ բանը ծանրելը մի վտանգ է պրոպագանդայի համար, կազմակերպուած սոցիալիզմի գործունէութիւնը պէտք է որոշ լինի։ Եթէ մենք միայն ընտրողական կուսակցութիւն ենք, դրա պատճառը այն է, որ մենք գործունէութիւն ենք ցոյց տալիս միայն ընտրողական շրջանների միջև։ Եթէ Մարոկկոյի աւերիւ ընդհարումից խոյս տուեցաւ, դրա պատճառն այն է, որ Սոցիալիստ Կուսակցութիւնը գործնական այն գործունէութիւնը ցոյց տուեց, որ մենք ջատագովում ենք։ Լիմօժի առաջարկը ճշդում է այդ գործունէութիւնը և, Շտուտգարտի Կոնգրէսի առաջ, նա վիճաբանութիւններ կյարուցանի, որի հետևանքը այն կլինի, որ ապագայի համար գործնական միջոցներ կլսորհուին։ Դօրդոյնի առաջարկը հակակրոնականութիւնը շեղումն է համարում, այդ ասելով ոչ միայն նա սխալմունք է անում, այլ սխալ մեղադրանք էլ բերում։ Հակակրոնական պրոպագանդան այնպէս՝ ինչպէս մենք ենք հասկանում, ինչպէս որ Կուսակցութիւնն է հասկանում, — մի օգտակար և անհրաժեշտ պրոպագանդա է և կարելի չէ, որ գործաւորական Միջազգայնականը այդ նկատմամբ մեղ իրաւունք չտայ։

ԺՈՐԷՍ

Նա յայտարարում է, որ ինքը հաւատարիմ է մնում Լիմօժի որոշմանը, որովհետև սա արտայայտում է Կուսակցութեան գործունէութեան և ապրելութեան քաղաքականութիւնը։ Ոչ ոք չի կարող ընդունել որ՝ պրոպագանդան, անհրաժեշտ է մի գործունէութիւն՝ պատերազմի սիրը խափանելու համար։ Հերվէիզմի արժանիքը նրա մէջն է կայանում, որ նա յամառօրէն, և նոյն իսկ շառաչինով, յիշեցնում է այդ գործունէութեան անհրաժեշտութիւնը։

Նախ մի կողմ թողնենք երկու միջոցէս, — Հերվէն ասաց որ իրեն հակառակող ընկերները կարելի է որ իրեն արտաքսեն Կուսակցութեան Մշտական Խորհրդից։ Այդ խնդիրն այլևս ձգուած է, մենք չուզեցինք, ճակատամարտ մղելու ժամանակ՝ բուրժուազական մամուլի պահանջին անսալով, Հերվէին ուրանալ, և այսօր Հիւսիսը կողմնակից է, որ Կուսակցութեան Մշտական Խորհուրդը կազմուի միաւորումների համեմատական ներկայացուցչութեան համաձայն։ Հետևապէս, ով որ Իսնի առաջարկի պաշտպանն է, նա էլ Հերվէին կընտրի։

Միւս կողմից ես չեմ սիրում, որ Հերվէն ընտրողական մտահոգութիւնների մեղադրանք բարդի իրեն կողմնակից չեղողների վրան։ Եթէ մի արդար գաղափարի և մի անհրաժեշտ պրոպագանդայի համար մեզ դէմ դառնար ամբողջ հանրաքուէն, — մենք դարձեալ չէինք յետս ընկրկիլ։ Զգէտք է թեթևամտորէն և անխորհուրդ կերպով թիւրիմացութիւններ ստեղծել մի երկրի հետ։ Հերվէն պատերազմի դէմ մղած իր գործունէութիւնը փճացրեց, բաւականին պարզ դիրք չընտրելով դէպի ազգերի անկախութիւնը։

Բնական սրամտութիւն կամ դիտաւորեալ, — Հերվէն թիւրիմացութիւնների համար ունի։ Երբ նա գրեց՝ գրօշակի նախադասութեան 4-րդ տողը աղբանոցի մէջ, — դա եղած էր որպէս մի բողոք գրօշակի պաշտամանի դէմ, և փոխանակ գրան՝ այդ գրուածը ընդունուեց որպէս հայհոյանք գրօշակի դէմ։ Երբ նա գրեց. "Անկցի՛ հասարակապետութիւնը", նա մոռացաւ գէթ չակերտներ դնել, և ընկերների յուզման առաջ՝ նա պէտք ունեցաւ իր մտադրութիւնը պարզել և այդպիսով պնակներ կոտրողից յանձնապակի կարկատող եղաւ, (յանքը շինելու տեղ՝ աչքը հանեց)։ Եւ միշտ միևնոյն ակամայ չար խաղն է, որ նա խաղաց Տիվոլի-Վ.-Հոլի մէջ, իր արտասանած ճառով ուրիշներին այն մտքը տալով՝ թէ ինքը բոլորովին անիսկի էր դէպի ազգերի անկախութիւնը։

ԱԶԴԸ

Պէտք է երկրիմութիւնը փարատել։ Շատ ընկերներ Հերվէիզմին յարեցան, որպէս աւելի կրոնական մի բողոքարկութիւն պատերազմի դէմ։ Իսնի առաջարկը քուէարկող ընկերները պէտք է գիտան թէ իրենք ինչ են ցանկանում քուէարկել. ըստ իս՝ հայրենիքները ոչ միայն իրողութիւն են, այլև ունին սոցիալիստական և մարդկային արժէք։ Ազգերի նաւաշինարաններումն է որ պրոլետարիատը կարող է աշխատել իր ազատագրութեան համար։ Նրանց ինքնատիպութիւնը անհրաժեշտ է մարդկութեան համար՝ որպէս անհատների ինքնուրոյնութիւն։ Արդ, դուք ի՞նչ էք անում այս ազգերին՝ Հերվէ՛։ Երէկ դուք չպատասխանեցիք ձեր դէմ եղած առարկութիւններին։ Դուք չպատասխանեցիք Ռապպոպորի առարկութեանը, որ ցոյց էր տալիս թէ դուք ընդունում էիք որ Մարոկկոցիները ինքնապաշտպանութեան դիմէին, մինչդեռ նոյն իրաւունքը պանում էիք Ֆրանսիայի՝ ընդհարման ժամանակ։ Դուք ասում էիք թէ չի կարելի խմանալ թէ ո՛վ է յարձակում գործողը և ո՛վ ինքնապաշտպանողը, և սակայն դուք հաւանեցիք Շուէտացիների և Նորվէգացիների բռնած դիրքին։ Ես ձեզ հետևեալ հարցն եմ առաջարկում, — եթէ արտաքին մի նշանից կարողանայիք խմանալ, որ մի ժողովուրդ նախայարձակ է, իսկ միւսը զոհ, ի՞նչ կանէիք դուք։ Արդ, անիրականանալի ցնորք չէ. — պրոլետարիատի մէջ մի շարժում կայ իրաւարարութեան համար (arbitrage), կառավարութիւնները ստիպուած են հետևելու. ուրեմն՝ եթէ ընդհարման բոպէին, Ֆրանսիան ասի. "Ես ցանկանում եմ իրաւարարութիւն և պատրաստ եմ նրան ենթարկուիլ," և

եթէ Գերմանիան, միևնոյն բոպէին, ասի՝ "Ո՛չ,"—ի՞նչ կանէք դուք։ Ես համոզուած եմ որ Իսնի կողմնակիցները ապրի ինքնապաշտպանութեանը կողմնակից կը յայտարարեն իրենց։

Դուք ինքներդ ցանկացաք ռուսական Յեղափոխութեան ինքնապաշտպանութիւնը կազմակերպել։ Ի՛հ, ձեր թէորիան հակասութեան մէջ է ձեր յեղափոխական կամքի դէմ։ Պատերազմի ժամանակ միայն Ֆրանսիայի ընդլիմադրութիւնը կարող է օգնել գերմանական յեղափոխութեանը՝ Կայսրութեան դէմ. անձնատուր եղող Ֆրանսիան գերմանական սոցիալիզմին կդաւաճանէ։

Իսնի առաջարկը երկմտութիւններով լի է, նա ամբաստանում է բուրժուական հայրենասիրութիւնը, ուրեմն ինքը մի ուրիշ տեսակի հայրենասիրութեան հասկացողութիւն ունի։ Սոցիալիզմի ճանապարհի վրայ գտնուող Ֆրանսիա՞ն մենք պիտի յանձնենք։

Այս հակասութիւնները չեն կարող պաշտպանուել։

Դուք յանեցած էք, Հերվէ՛, հայրենիքի նկատմամբ դուք մտածմունքի այն զրութեան մէջն էք գտնուում, որի մէջ էին գործաւորները սրանից մէկ դար առաջ՝ մեքենաների նկատմամբ, երբ նրանք մեքենաները փշրում, խորտակում էին։ Պրոլետարիատը ոչ թէ պէտք է փշրէ հայրենիքը, այլ ընկերականացնի։

Սխալ է, խակապէս, հայրենիք և դասակարգ իրարու հակադրել։ Գործաւորները հայրենիք չունին՝ ասում է, ընդհակառակը՝ նրանք հայրենիք չունին, երբ դասակարգ չեն կազմում։ Որչափով որ նրանք համախմբւում են կռուի համար, այնչափով էլ գործաւորները մի հայրենիք ունին։ Եւ գործաւոր դասակարգը ունի իր հայրենիքը։

Ահա լեզուն, որով ես խօսած եմ ամէն տեղ։

Հաւատացէ՛ք, սա ընտրողական խոհեմութիւն չէ, այլ ճշմարտութեան մի պարտականութիւն, որ մենք կկատարէինք նոյն իսկ պրոլետարիատին հակառակ, երբ դուք յաջողէիք նրան մոլորեցնել։ Եթէ դուք կողմնակիցներ ունիք, — դա պատերազմի դէմ ընդհանուր գործունէութեան կարիքի պատճառով է։ Այդ գործունէութեանը ընդդիմադրելով՝ Հիւսիսի մեր ընկերները Հերվէիզմին են ոյժ տուած լինում։ Սա Լիմօժի առաջարկի տրամաբանութեան իմաստն է։

ԳԷԴԸ ընդմիջում է,

"Այդ ձևի տակ՝ մենք ընդունում ենք այն"

(Երկարատև ծափահարութիւններ։)

ԺՕՐԷՍԸ շարունակում է, — թւում է թէ Դօրդօյնի առաջարկը ամէն գործունէութիւն դատապարտում է։

Իր պակասութիւնը դրա մէջն է։ (Գէդը բողոքում է։) Եթէ մենք համաձայն լինէինք այն բանի մասին թէ այժմեան միջավայրում՝ կարելի է զօրեղ կերպով պատերազմի դէմ գործել, ապա մեզ կմնայ միջոցները խորհիլ։

Բայց ես չեմ կարծում որ մենք համամիտ ենք նախապայմանների վերաբերմամբ։ Դուք վերջնական մի նպատակ էք ընդդրկում, և յետոյ կիսով չափ անտարբեր էք մնում դէպի միջոցները։ Ես հանգիստ չեմ, երբ դուք հակազինուորական նուիրումը և հակակրերականութիւնը նկատում էք որպէս շեղումներ։ Բայց Բեբելն իսկ՝ իր առաջարկով ընդունում է, որ կարելի է պատերազմին խոչնդոտ հանդիսանալ՝ կապիտալիզմը կործանելուց առաջ։ Միլիտարիզմը (զինուորականութիւնը) այնպիսի բեռներ է հարկադրիչ դարձնում, որ շատ դասակարգեր պատրաստ են նրա դէմ մարտնչելու։

ԴՕՐԴՕՅՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Ես շատ լաւ գիտեմ, Գէդ, որ հակազինուորական այդ գործունէութեան համար դուք սոսկում էք խառնափնդորականութիւնից։ Ճշմարտութիւնը այն է՝ որ ես կողմնակից եմ կռուի՝ ամէն հողի վրայ։ Եթէ այս է, որ դուք անտանում էք խառնափնդորականութիւն, ապա, զգուշացէ՛ք, ձեր առաջարկը ինքնին մի բացարձակ խառնափնդորականութիւն է, որովհետև ո՞րն է այն արդարութիւնը որ պաշտպանում էք — և իրաւամբ — Հերվէի դէմ, եթէ ոչ՝ խառնափնդորականութեանց խառնափնդորականութիւնը։ Եւ արդարև, պատերազմի յայտարարութեան ժամանակ, Դօրդօյնի առաջարկը գործադրուած ի՛սկ լինելով, ի՞նչ պիտի անեն պրոլետարները, եթէ ոչ բուրժուաների հետ խառնուիլ միևնոյն զրօշակի տակ։ Ես ասում եմ որ դա վտանգ չէ, որովհետև պրոլետարները դասակարգային բաւականաչափ գիտակցութիւն ունին հայրենիքը պաշտպանելու համար բուրժուաների հետ՝ թէև բոլորովին ուրիշ շարժառիթներից մղուած։

. . . Ես ասում եմ, շարունակում է ԺՕՐԷՍԸ, որ եթէ զինուորականութեան դէմ ուղղակի ճակատամարտ մղելու մէջ խառնափնդորութիւն կայ, ապա Դօրդօյնի առաջարկը այդ վտանգը ամենաբարձր կէտին է հասցնում։ Բայց Դօրդօյնի առաջարկի մէջ մի եղակի հակասութիւն էլ կայ։ Ի՞նչպէս։ Խօսքս պատերազմական վարկի մասին է. ինչո՞ւ համար մենք՝ սոցիալիստներս, մասնաւոր կերպով մերժում ենք պատերազմական բիւջէն։ Դա ազգը զինաթափ անելու համար չէ, նրա համար չէ, նոյնպէս, որ մենք զինուորական առանձին վախ ունինք։ Մենք այդ վարկը մերժում ենք ցոյց տալու համար՝ որ կառավարութիւնը որոշ երաշխաւորութիւն չի տալիս պրոլետարներին, որ բռնի աշխարհակալութիւններ չի անիլ, և որ բանակը զարգ է ածում գործադուլի դէմ։

Ուրեմն այդ միջոցը դերս է։ Դուք ինքներդ այդ գիտէք, Գէդ։ Բայց ինչո՞ւ, ուրեմն, Դօրդօյնի առաջարկը ջատագովում է գործունէութեան մի միջոց, որ դուք խոստովանում էք թէ խաբուսիկ է։ Այդ նրա համար չի՞, որ դուք անհրաժեշտութիւն էք համարում, այդ կերպով, այդ նկատմամբ բաւականութիւն տալու մտքին, պրոլետարիատի մարտականութեան կարիքին։

Ի՛հ, մի պատերազմի յայտարարութիւն ասեն՝ ի՞նչ ոյժ էր ունենալ սոցիալիզմը, եթէ իր բոլոր կազմակերպութիւնների մէջ յայտարարէր կառավարութեան թէ ինքը ցանկանում է, որ ընդհարումը իրաւարարութեան ենթարկուէր, եթէ ոչ՝ ինքը պատրաստ էր ապստամբելու։ Այո՛, ոՀիր կլինէր, եթէ թոյլ տրուէր որ պատերազմ տեղի ունենար։ Եւ ի նկատի ունեցէք, որ նոյն իսկ մի փոքրամասնութեան գործունէութիւն, այդ ողբերգական բոպէների մէջ, կարող է վճռական լինել և կառավարութիւնները անկարող են ճշգիւ որոշել իրենց առաջը կանգնող ընդդիմադրութեան ոյժի չափը։

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԴԻՐՔԸ

Մեզ ասում են թէ գերմանացիները այդ կարգի վճիռներ չեն կարող ընդունել Շտուտգարտի մէջ։ Մենք այդ կըսեմենք։ Ես երկիւղ եմ կրում որ մի՛ զուցէ այստեղ եղող մեր ընկերներից շատերը աւելի խոհեմ լինեն՝ քան գերմանացիները։ Ցիշենք Կաուցկու խօսքերը Գերմանիայի միջամտութեան նկատմամբ՝ ռուս յեղափոխական շարժումը ճնշելու համար։ Եւ նա չի՞ գրել, նոյնպէս, թէ սոցիալիզմը արդէն բաւականին ուժեղ էր, ո՛չ թէ իրաւարարութիւնը հրամայական դարձնելու, այլ գերմանական կառավարութեան ահաբեկման մի սարսուռ տալու՝ պատերազմի առաջ։ Ի՛հ, ես ասում եմ, որ այդ յայտարարութիւնը արդէն բաւականին մօտ է Լիմօժի առաջարկին։

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՐՎԷԻ ՃԱՌԸ

Հերվէն խօսք է առնում Ժօրէսին պատասխանելու։ Նա ասում է, որ ինչքան էլ ասողներ կան թէ Իսնի առաջարկը կցկտուր է, այնուամենայնիւ Լիմօժի մէջ ասացած ճայների կրկնապատիկը նա պիտի ասանայ Նանսիի մէջ։ Ցետոյ նա բացատրութիւն է տալիս իր ազգակարգ նախադասութիւններից մի քանիսի մասին. եւ նախ այն նախադասութեան, որով զրօշակը ցցել էր աղբանոցի մէջ Վագրամի ճակատամարտի

տարեդարձի նախօրեակում, և ապահովացնում է որ իր այդ արարքը այնքան էլ կրօնական չի եղել, ինչպէս ներկայացնում է Ժօրէսը։ Ճշմարտութիւնը այն է, որ ինքը գիտէր թէ պուալ-կանչելու տեղիք պիտի տար, ուստի ինքը այդ արել է դիտմամբ, որպէսզի աւելի մեծ ուշադրութիւն գրաւէ։ Միևնոյն բացատրութիւնն ունիմ մեր նախադասութիւնների մասին, օրինակ, "Անկցի՞ հասարակապետութիւնը"։

— Ճիշդ է, ասում է ՎԱՐԼԷՆԸ

— Դուք մէկն էք նրանցից, որոնց ես ի նկատի ունեմ, պատասխանում է Հերվէն, և որովհետև ձեզ նման շատ սոցիալիստներ կան, ուստի ես կարիք եմ զգում ձեզ ապահովացնելու թէ մենք երբէք չենք պաշտպանիլ հասարակապետութիւնը՝ կարմիր կերպով։ Այո՛, իմ յոգուածի միտքը աղաւաղեցին։ Բայց ինչի՞ այդ միայն ինձ էր պատահել։ Ժօրէսը չի՞ յիշում իր այն նամակը, որ նա ուղղել էր Նապուս անունով մի սոցիալիստի, չէ՞ որ այդ նամակի միտքն էլ աղաւաղեցին և մենք ուղղելու պէտքն զգացինք։

Նա բացատրում է այնուհետև իր առաջարկի միտքը և աշխատում սահմանել իր սոցիալիստական հայրենասիրութիւնը՝ որ հակադիր է Դէգի ու Ժօրէսի հակացած հայրենասիրութեանը։

— Արդ, լսի՛ր, Քաղաքացի Ժօրէս, բացականչում է նա։

— Ձեր հրամանին եմ սպասում, տասնապետ (caporal), պատասխանում է Ժօրէսը, զինուորական բարև տալով։ (բարձրաձայն ծիծաղ։)

Մեր հայրենասիրութիւնը, վերսկսում է Հերվէ, դասակարգային հայրենասիրութիւն է։ Դէգի և Ժօրէսի հայրենասիրութիւնը մի հայրենասիրութիւն է, որի մէջ ձուլում են բոլոր դասակարգերը։

Այնուհետև նա պատասխանում է իրեն ուղղուած հարցերին՝ թէ այն դէպքում, երբ մի ազգ պատերազմի սպառնալիքի ենթարկուի, իրաւունք ունի՞ ինքնապաշտպանութեան դիմելու, և յայտարարում է թէ ինչոր վերաբերում է ռուս յեղափոխութեան պաշտպանութեան կազմակերպութեանը, նա կարծում է որ Սոցիալ-Դէմոկրատիայի պարտականութիւնն է բոլոր ուժով ընդդիմադրել ամէն միջամտութեան, որովհետև Ռուսաստանի երկրագործական պայմանները աչքի առաջ ունենալով, յաջողութեան պայմաններ կան, որ համայնական սիրապետութեան այդ նախատաղից սոցիալիստական ընկերութիւն դուրս գար։ Իսկ ինչոր վերաբերում է իրենց՝ ռուսներին, նրանք պէտք է աշխատեն ձեռք գցել արտադրութեան և փոխանակութեան միջոցների վրան։

Ժօրէսի այն ենթադրութեան համար թէ երբ մի երկիր իրաւարարութիւն պահանջի, իսկ միւսը յարձակում գործէր, Գերմանիան, օրինակի համար, Ֆրանսիայի վրայ արշաւող, այդ պարագային գերմանական Սոցիալ-Դէմոկրատիան ապրստամբութիւն պիտի գործի Գերմանիայի մէջ, ինչպէս և նոյն ժամանակին Ֆրանսիական Սոցիալ-Դէմոկրատիան՝ Ֆրանսիայի մէջ։

Մարոկկոյի օրինակին դալով, թեզը փոխուում է, որովհետև նա չի կարող դիմել Մարոկկոյի պրոլետարիատին և նրանց չի կարող ցոյց տալ դասակարգային իր դիրքը, ուստի միայն աշխարհակալ ժողովրդին դիմելով է որ կարելի է ընդհարումից խոյս տալ։

Նա աւելացնում է, թէ ինքը համոզուած է, որ Ժօրէսը իրեն դէմ չի մարտնչում միմիայն ընտրողական պատճառներից դրդուած, բայց նա հաւատացած է որ, մանաւանդ, պարլամենտական սոցիալիստների մեծ մասը այդ մտահոգութիւնը ունին։

ԳԷԴԻ ՃԱՌԸ

Երէկ ես ցոյց տուէի թէ Լիմօժի առաջարկի մէջ ի՛նչ հակասութիւններ կան և թէ ինչ պատճառով է, որ այդ առաջարկը չի կարելի ներկայացնել Միջազգային Կոնգրէսին։

Ես դալիս եմ պատասխանելու այն քննադատութիւններին, որ եղան Դօրդոյնի առաջարկի նկատմամբ։ Ասում են թէ դա անշարժութեան և անգործունէութեան մի առաջարկ է, նրա այն նկատմունքի պատճառով՝ որով հաստատում է թէ պրոլետարիատի միակ մտահոգութիւնը պիտի լինի քաղաքական իշխանութիւն ձեռք բերել՝ կապիտալիստական սեպհականազրկման և արտադրութեան միջոցների ընկերային սեպհականութիւն դարձնելու համար։ Բայց գործաւոր դասակարգի կազմակերպելը անգործունէութիւն չէ. դա ամբողջ սոցիալիզմն է և այն վերհագոյն գործունէութիւնը, որ անհրաժեշտ է նրա համար։ Այդ բանին իրենց ջանքերը տալով՝ սոցիալիստները չեն կարող մեղադրուել որպէս անգործունեաներ։

Զինուորական ծառայութեան ժամանակամիջոցի կրճատմանը հետապնդելով և ստանալով՝ մենք նպաստում ենք ազգի ապազինուորականացմանը (démilitariser) և դա արհամարհելի մի բան չէ։

Ընդհակառակը, իրաւունք ունեն նրանք, որոնք ասում են թէ պատերազմական վարկի մերժումը տղայութիւն է։

Բայց Հերվէի յայտարարութիւնները և՛ս աւելի վտանգաւոր են. նրանք խոշնորհ են սոցիալիստական պրոպագանդային և սոցիալիստական շարժման տարածմանը։

Մենք չենք ընդունում մեզ դէմ ուղղուած այն մեղադրանքը, թէ մեր առաջարկած գործունէութեան միջոցները անիրականացուցիչ են, որովհետև մենք այդ միջոցները չենք մղում մինչև ապատամբութիւն և մենք չատադրում ենք քաղաքական իշխանութեան սիրապետելը և արտադրութեան միջոցների ընկերականացումը։ Մենք պարտականութիւն ունինք բանաձևելու միայն այն, ինչոր կարող ենք իրականացնել, և նոյնպէս գործածել միայն այնպիսի խոհեմ լեզու, որ նեղը չէր ձգիլ միւս ազգերի մեր ընկերներին։

Լիմօժի առաջարկը մեր ցանկացած յստակութիւնը և ճշդութիւնը չունի։ Թող առաջ բերեն Գերմանիայի մեր ընկերների նման բանաձևուած մի բնագիր, կամ մի այնպիսին՝ որպիսին մի քիչ առաջ բացատրում էր Ժօրէսը, — և մենք կընդունենք։

Այս կերպ կփարատուեն երկդիմութիւնները։

Անցնում են քուէարկութեան։

Լիմօժի առաջարկը մերժուում է 251 ձայնով 41-ի դէմ՝ 12 ձեռնպահութիւն։

Դօրդոյնի առաջարկը մերժուում 175 ձայնով 123-ի դէմ և 6 ձեռնպահութիւն։

Լիմօժի առաջարկի առաջին մասը վերապահուում է 251 ձայնով 23-ի դէմ և 30 ձեռնպահութիւն։

Լիմօժի առաջարկի երկրորդ մասը ընդունուում է 169 ձայնով 125-ի դէմ և 9-ը ձեռնպահութիւն։

Լիմօժի առաջարկի ամբողջութեան քուէարկութիւնը տալիս է.

Դեր	190
Դէմ	16
Ձեռնպահութիւն	100

Նիստը փակուում է։

(Շարունակելի)

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանում ստացուել են հետևեալ գումարները. —

„ԺԼՈՆԱԽՈՑՊԻ Մ-ղից	—	—	—	—	20	ր.	—
ՊՈՒԴՐԻՇԻ „	—	—	—	—	70	ֆ.	0 ս.
ՌՈՒՍՄՈՒԴԻ „	—	—	—	—	300	„	„
ՍՕՓԻԱՅԻ „	—	—	—	—	200	„	„
ՃԱՎԱՑ՝ Ո Ոսկանեանից	—	—	—	—	50	„	10 „
Տոքտ. Եսէյեանից	—	—	—	—	20	„	„
ԱՄԵՐԻԿ· ԳՈՐԾ. ՑԱՆՁՆԱԽՄԲԻՑ	—	—	—	—	167	տ.	75 ս.
ԻՍՏ ՍԷՆՏ ԼՈՒԻԶԻ Մ-ղից (ի նպաստ քաղ. քանու)							30 տ.

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7, PARIS. (France)

Imprimeur-Gérant EMILE LEBÉE